ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

8 4 AUG 2010

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԶՈՈՏԵԽՈՒՍՈՒՑՄԱՆ

636
Ծ-98

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1937 ԵՐԵՎԱՆ

ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

636
Ճ-98

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԶՈՈՏԵԽՈՒՍՈՒՑՄԱՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1937 ԵՐԵՎԱՆ

MAR 2014
21.246

Программа по зоотехучебе
в животноводческих
товарных фермах

Сельхозгиз, Ереван, 1937 г.

430
38

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաներում (ԿԱՖ-երում, ՎԱՖ-երում յեվ ԽԱՖ-երում) զոոտեխնիկական ուսուցման գիտելիքների ծրագրի մասին

Այս ծրագիրը, նախքան խմբակների ղեկավարներին հանձնելը, պետք է քննվի և համապատասխան վերամշակման յենթարկվի այդ նպատակի համար հրավիրված խմբակների ղեկավարների հրահանգչա-մեթոդական խորհրդակցություններում։

Առանձին թեմաների բովանդակությունը պետք է ճշտվի, կոնկրետացվի և հարմարեցվի տվյալ շրջանի արտադրական պայմաններին։ Թեմաներն իրենց հերթին ստորաբաժանվում են առանձին յենթաթեմաների. օրինակ՝ «Խոշոր յեղջյուրավոր անասունի տարբեր ցեղերը և բուծումը» թեման մշակելիս պետք է ճիշտ կերպով սահմանել և վորոշել տվյալ խմբակում անցնելիք ցեղերը։

Այդ վերջինն իր հերթին հնարավորություն է տալիս ճշտել և մի շարք այլ թեմաներ, վորովհետև խնամքի, կերակրման և այլ խնդիրները պետք է կապակցել այդ ցեղերի առանձնահատկությունների հետ (անցնել այդ ցեղերի կապակցությամբ)։

«Խնամք և պահպանում» թեմայում ճշտվում և կոնկրետացվում են տվյալ շրջանի պայմաններում հաճախ պատահող հիվանդությունների ցանկը, այդ հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ միջոցները և այլն։ Խմբակի ղեկավարն այս ծրագրով կարող է սկսել աշխատանքները միայն այն դեպքում, յերբ արդեն ամեն մի ծրագրի բոլոր թեմաները ճշտվել և խմբակի ղեկավարների հետ մշակվել են։ Դասավանդման մեթոդիկան կախում ունի գլխավորապես դասատուի և սովորողների պատրաստականության աստիճանից։

Հիմնական ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, վոր ամբողջ ուսուցումը լինի կոնկրետ և հասկանալի՝ խմբակի ամեն մի անդամի համար։

Ուսուցումը պետք է շատ սերտ կերպով կապակցված լինի տվյալ կոլտնտեսության ապրանքային ֆերմայի առաջ դրված արտադրական խնդիրների հետ։ Պարապմունքների ընթացքում պետք է հսկել, որ ամեն մի խմբակի անդամ ոչ միայն լավ յուրացնի ուսումնական նյութը, այլև ստացած գիտելիքներն ակտիվ կերպով գործադրի իր առօրյա արտադրական աշխատանքներում։

Հենց այդ պատճառով էլ խմբակի ղեկավարի հիմնական խնդիրներից մեկն ուսուցման ընթացքի ղեկավարման, ամեն մի սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման ստուգումն է։ Միաժամանակ նա պարզում է, թե ինչպես է անդրադառնում ուսուցումը նրա աշխատանքների ընթացքի վրա (կենդանիների խնամքի և պահպանման գործում)։

ԿԱՖ-երում պարապելու համար կազմված ծրագիրն ընդհանուր է, որովհետև մեծ մասամբ դժվար է լինում մի ֆերմայում յերկու կամ մի քանի խմբակներ կազմակերպել։ Տարբեր բնույթի աշխատանք կատարող կոլխոզնիկներից պահանջվող նորմաները տարբեր են։

Խմբակի ղեկավարը պետք է հաշվի առնի այս հանգամանքը և ընթերցման համար համապատասխան գրականություն ընտրելու, լրացուցիչ առաջադրանքների և պարապմունքների միջոցով հասնի այնպիսի դրության, որ ամեն մի կոլխոզնիկ լրիվ տիրապետի իր կատարած աշխատանքներին համապատասխանող և իրենից պահանջվող գիտությունների մինիմումին։



# ՀՐԱՀԱՆԳ

**Կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում զոոտեխնիկական ուսուցումն անցկացնելու կարգի մասին**

1. Կենդանիների լավագույն խնամքը և պահպանումն ապահովելու, մթերատվությունը բարձրացնելու, ինչպես և կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականներին զոոտեխնիկական-անասնաբուժական գիտելիքներ տալու նպատակով, բոլոր անասնապահական ֆերմաներում պետք է կազմակերպվեն զոոտեխնիկական խմբակներ։ Խմբակում պարապողների թիվը 20—25 հոգուց ավելի չպետք է լինի։

Այդ պատճառով էլ խոշոր ապրանքային ֆերմաներում կարելի յե մի քանի խմբակներ կազմակերպել։ Նախորոք, մինչև պարապմունքներն սկսելը, շրջհողբաժնի, անասնապահական սեկտորի վարիչի, շրջանային զոոտեխնիկների և անասնաբույժների միջոցով կոլտնտեսականների մեջ զոոտեխմինիմումի անհրաժեշտության մասին լայն մասսայական-բացատրական աշխատանքներ են տարվում, բացատրվում են ուսուցման ձևերը։ Խմբակներ կազմակերպելու առթիվ կոլտնտեսությունների վարչություններին համապատասխան հրահանգ է տրվում։

2. Տվյալ ֆերմայում աշխատող բոլոր կոլտնտեսականները ներգրավվում են խմբակում պարապելու համար։ Անասնապահական խնդիրներով հետաքրքրվող մնացած այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, որոնք ցանկություն ունեն անցնելու զոոտեխնիկական ուսուցումը, խմբակում մասնակցելու լայն հնարավորություն պետք է տրվի։

3. Խմբակի պարապմունքները կատարվում են շաբաթական 2—3 անգամ, ամեն անգամ 2—3 ժամ տևողությամբ։ Խմբակի պարապմունքների համար սահմանվում են մշտական օրեր, համաձայնեցնելով վերջինը կոլտնտեսության վարչության հետ։

Խմբակի պարապմունքների ժամերը սահմանվում են այն հաշվով, որ չխանգարեն ֆերմայում սահմանված արտադրական աշխատանքների կարգը։ Խմբակի պարապմունքների ընթացքում

կոլտնտեսականների ուշադրությունը և ժամանակը չպետք է զբաղեցնել այլ աշխատանքների կատարումով։

4. Խմբակի պարապմունքների համար կոլտնտեսության վարչությունը պարտավոր է առանձնացնել և մշտապես խմբակին հատուկ շենք հատկացնել, ապահովելով լուսավորությամբ, վառելիքով, անհրաժեշտ կահավորումով (սեղաններ, աթոռներ, նստարաններ և այլն)։

5. Խմբակը կառավարելու համար նշանակվում են զոոտեխնիկներ, ագրոնոմներ, անասնաբուժներ, զոնալ կայանների և պետ. տոհմաբուծարանների աշխատողները, գյուղատնտեսական ուսումնական հիմնարկների դասատուները, ֆերմաների լավագույն վարիչները, շրջանային կոլտնտեսական դպրոցների յերկարատև դասընթացն անցած բրիգադիրները և կոլտնտեսության նախագահները։

6. Խմբակի աշխատանքների ամբողջ պատասխանատուն ֆերմայի վարիչն է։

7. Խմբակի բոլոր պարապմունքները տեղի յեն ունենում ՀԽՍՀ Հողժողկոմատի կողմից հաստատված ծրագրերով։

8. Խմբակի պարապմունքները վերջանալուց հետո կազմակերպվում է բոլոր սովորողների ստուգումը (տեխնիկական քննությունը) ՀԽՍՀ-ի Հողժողկոմատի կողմից հաստատված ծրագրի և պահանջվող նորմաների սահմաններում։

9. Տեխնիկական քննությունն անցկացնելու համար կազմակերպվում է առանձին հանձնաժողով հետևյալ կազմով՝

ա) շրջհողբաժնի ներկայացուցչից.

բ) ՄՏԿ-ի ներկայացուցչից.

գ) կոլտնտ. վարչության մի անդամից.

դ) ֆերմայի վարիչից.

ե) խմբակի ղեկավարից։

10. Դասընթացն ավարտող և տեխ. քննությունը տվող բոլոր կոլտնտեսականներին և մենատնտեսներին տրվում է համապատասխան վկայական։

11. Ֆերմայի վարիչը կուրսերի բացման և սովորողների թվի մասին անհապաղ պարտավոր է հայտնել շրջհողբաժնին։

Պարապմունքները վերջանալուց և ուսանողներին քննելուց հետո ֆերմայի վարիչը շրջհողբաժնին հայտնում է հետևյալ տեղեկությունները՝

ա) դասընթացն ավարտողների թիվը.

բ) քննություն տվողների թիվը.



Զոոտեխնիկական ուսուցումը կազմակերպելու, աշխատանքների վերահսկողության և հաշվառման բոլոր աշխատանքները շրջանի մասշտաբով կատարում է շրջհողբաժինը։

Շրջհողբաժնի վարիչը պարտավոր է ապահովել խմբակների ղեկավարների հաջող ընտրությունը և նրանց ամրացումը խմբակին՝ ամբողջ ուսուցման ընթացքում։

Զոոտեխնիկական ուսուցման հաջող ղեկավարումը պետք է շրջանի մասնագետի արտադրական աշխատանքի բաղադրիչ մասը կազմի։

Խմբակների ղեկավարներին մշտական օգնություն ցույց տալու համար շրջհողբաժինը պարտավոր է, մինչև խմբակի պարապմունքներն սկսելը, կազմակերպել խմբակի ղեկավարների 15-որյա կուրսեր, վորտեղ պետք է մշակվեն ծրագրերի հետ կապված զանազան խնդիրները, պարապմունքների հետ կապված մեթոդական և այլ հարցերը։

Վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ խմբակների ղեկավարների հետ անցկացնել խմբակցական խորհրդակցություններ։

Ամիսը մեկ անգամ շրջանային հողբաժինը հաշվետվություն է ներկայացնում Հողժողկոմատ՝ խմբակներում ներգրավված սովորողների թվի և ուսուցման ընթացքի մասին։

Հողժողկոմի տեղակալ՝ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

## ԾՐԱԳԻՐ

### Կաթնապրանքային ֆերմայի զոոտեխնիկական գիտելիքների

Ուսուցման տևողությունը 3 ամիս. պարապմունքները՝ որումեջ՝ 2 ժամ տևողությամբ։

| ԹԵՄԱՅԻ ԱՆՈՒՆԸ | ԺԱՄԵՐԻ ԹԻՎԸ |
|---|---|
| 1. Ներածություն | 4 ժամ |
| 2. Կերի տեսակները և կերակրում | 20 » |
| 3. Տավարի խնամքը և պահպանումը | 12 » |
| 4. Տավարի տարբեր ցեղերը և բուծումը | 10 » |
| 5. Մատղաշների խնամքը և դաստիարակումը | 12 » |
| 6. Կով կթելը և կաթը խնամելու կանոնները | 12 » |
| 7. Աշխատանքի կազմակերպումը և պլանավորումը | 10 » |
| Ընդամենը | 80 ժամ |

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը վորպես ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը։

Անասունների թվի պակասումը ԽՍՀՄ գյուղատնտեսության վերակառուցման առաջին տարիներում, անասնապահության զարգացման և վերելքի համար ստեղծված նախադրյալները 2-րդ հնգամյակում (հացահատիկային պրոբլեմի լուծումը, գյուղատնտեսության մեքենայացումը, խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը և այլն)։

Համ. Կ(բ) ԿԿ-ի հուլիսյան պլենումի վորոշումը՝ անասնապահությունը բարձրացնելու, բարելավելու մասին։ Կոլտնտեսական ապրանքային ֆերմաների լայնացումը և անասնապահական խորհտնտեսությունների ամրացումը, վորպես անասնապահությունը բարձրացնելու գործում սկսած պայքարի հիմնական օղակներ։ Անասնապահական խորհրդային տնտեսությունների



հիմնական խնդիրները [տավարի տարբեր ցեղերի լավացումը, օգնություն ԿԱՖ-երին՝ մթերատու անասուններ և մատղաշներ տալու (վաճառելու) միջոցով]։

ԿԱՖ-եր ունեցող կոլտնտեսություններին տրվող արտոնությունները՝ մսի, կաթի և բրդի մթերումների ասպարեզում։ Կայուն կերի բազան վորպես հիմնական պայման անասնապահության զարգացման և վերելքի գործում։ Կենտկոմի հուլիսյան պլենումի դիրեկտիվները կերի բազայի լայնացման առթիվ։

Կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելու առթիվ կուսակցության կողմից ձեռք առած միջոցները (անտոկոս վարկեր տրամադրելը)։ Անասնապահության զարգացման պետական պլանը և նրա նշանակությունը։

Դասակարգային աչալրջության անհրաժեշտությունը և պայքարն անասնապահական պլանների կատարման ասպարեզում՝ դասակարգային թշնամու կողմից պլանների կատարումը խանգարելու փորձերի դեմ։

### ԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐՈՒՄ (20 ժամ)

Հասկացողություն կովի մարսողական, շնչառության օրգանների, արյունատար անոթների կազմության և աշխատանքի մասին։ Հասկացողություն տարբեր կերերի բաղադրության և սննդարար լինելու մասին։ Հասկացողություն կերի մարսելի լինելու մասին։

Կերի միավորը վորպես տարբեր տեսակ կերերի սննդարար արժեքի չափանիշ։ Կերի նորմաները։ Կոպիտ, ուժեղ կամ խտացրած, հյութալի, սիլոսացրած և արոտային կերեր։ Վերջինների սննդարար արժեքը և ազդեցությունը տավարի մթերատվության վրա։ Հանքային նյութերը (կիր, աղ, մոխիր և այլն). սրանց ազդեցությունը կենդանիների աճման և զարգացման վրա։ Կերը նախապատրաստելու ձևերը և միջոցները։ Կերը նախապատրաստելու համար գործադրվող մեքենաները, վերջինների խնամքը և նրանց հետ վարվելու ձևերը։ Կերի խնամքը և հսկողությունը՝ կերը պահելու ժամանակ։ Կերի վորակի վորոշումը նրա արտաքին տեսքից։ Հասկացողություն կենսապահ և արդյունավետ կերի մասին։

Կենդանի քաշի վորոշումը՝ չափելու և կշռելու միջոցով։ Կերի ռացիոններ (բաժիններ) կազմելու ձևերը։

Կովերի կերակրման առանձնահատկությունները՝ լակտացիոն շրջանի տարբեր ժամանակամիջոցներում։ Կովի կերակրու-

մը հղիության յերկրորդ շրջանում, ծնելու նախօրյակին և ծնելու առաջին օրերը։ Արտադրող ցուլերի կերակրումը զուգավորման շրջանում և դրանից դուրս։ Մսացու տավարի բտումը։ Կերաբաժնի դասավորումն օրվա ընթացքում։ Խմբակային և անհատական կերակրում։ Օրվա աշխատանքների դասավորումը ձմեռային սեզոնում։

Տավարի կերակրումը մսուրային շրջանից արոտային շրջանին անցնելու ժամանակ։ Արոտավայրի նախապատրաստումը՝ տավարն արոտ դուրս բերելու նախօրյակին (քարերից, զանազան կեղտոտություններից մաքրելը, տարբեր մասերի բաժանելը և այլն)։ Օրվա աշխատանքների կարգն արոտային շրջանում։ Տվյալ կոլտնտեսության արոտների բնութագիրը և գնահատումը։

Արոտի ընտրությունը խոշոր յեղջյուրավոր անասունի համար։ Աղալների կազմակերպումը և դրանց առավելությունները։ Անդադար արածեցնելն ու նրա նշանակությունը։ Տավարի կերակրումն արոտային խնամքից մսուրային կերակրման անցնելու շրջանում։

Կենդանու օրգանիզմի պահանջը ջրի նկատմամբ և ջրի վորակը։ Հիվանդ և առողջ կենդանու նշանները։ Օգնություն կենդանու վիրավորվելու և քերծվելու դեպքում։

Ստամոքսա-աղիքային հիվանդություններ (փորլուծ, տիմպանիտ և այլն), կովերի հղիության և ծնելու հետ կապված հիվանդությունները։

**Դիտողություն.**— Հիշված հիվանդությունների մասին դասավանդելիս հիմնական ուշադրությունը պետք է դարձնել հետևյալ հարցերի վրա՝

1. հիվանդության պատճառները և դրանց դեմ ձեռք առնվելիք նախազգուշական միջոցները.
2. հիվանդ կենդանիների խնամքը։

## ՏԱՎԱՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ (12 ժամ)

Խնամքի և պահպանման պայմանների ազդեցությունը կենդանիների առողջության և արտադրողականության վրա. ինչ պահանջներ է դրվում կենդանիների շենքերի նկատմամբ՝ լույսի, օդի, տաքության, մաքրության և չորության տեսակետից։ Տավարի շենքերը խնամելը (մաքրելը, լվանալը, սպիտակեցնելը, ախտահանելը)։ Կենդանիների ձմեռելու համար ձեռք առնվելիք միջոցները (վերանորոգելը, տաքացնելը և այլն)։



Գոմաղբը գոմից դուրս տանելը և նրա պահպանումը։ Կենդանիների խնամքը (մաքրելը, լվանալը, լողացնելը), կենդանիներին զբոսանքի դուրս բերելը և դրա նշանակությունը։

Գոմը և կենդանիներին խնամելու համար անհրաժեշտ ինվենտարը։ Ինչպես պետք է վարվել գույքի հետ և խնամել այն։

Հղի և կաթնատու կովերին խնամելու առանձնահատկությունը. ցուլերին խնամելու առանձնահատկությունը։ Չար և կատաղի տավարի հետ անվտանգ վարվելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցները (ցուլերի քթին օղ անցկացնելը, յեղջյուրների ծայրերը կտրելը, տաշելը և այլն)։ Ինչպես պետք է խնամել կենդանիներին հանգիստ և խաղաղ բնավորություն ստեղծելու համար։ Արտադրող ցուլերին աշխատեցնելը և լծելու համար անհրաժեշտ սարքավորումը։ Հասկացողություն վարակիչ հիվանդությունների մասին և վերջինս առաջացնող պատճառները։ Տվյալ շրջանում հաճախակի պատահող տավարի վարակիչ հիվանդությունները (թոքախտ, թոքատապ, համատարած վերքումներ, սիբիրախտ, դաբաղ և այլն)։ Այդ հիվանդությունների նշանները և տարածման ձևերը։

Ախտահանում և ախտահանման նշանակությունը։ Հասկացողություն ախտահանման ձևերի մասին։ Կենդանիների պարազիտներ (վոջիլներ, բոռեր, քոս, մրջիմուկ կամ մկնատամներ, ճիճուներ) և պայքար սրանց դեմ։ Պրոֆիլակտիկ միջոցառումները (կարանտին, հիվանդ կենդանիների անջատում, դիակներ հավաքելը, թաղելը և այլն) և սրա նշանակությունը հոտի առողջացման գործում։ Զոովետ-կանոնները և նրանց կիրառումը տվյալ շրջանի տվյալ կոլտնտեսություններում։ Հիվանդ կենդանիների ախտահանման, նրանց խնամքի և պահպանման կանոնները։

**Դիտողություն.**— Խմբակային պարապմունքների ժամանակ անցնելիք տարբեր հիվանդությունների ցանկն ստուգվում և ճշտվում է շրջհողբաժնի անասնաբուժի կողմից։

## ՏԱՎԱՐԻ ՏԱՐԲԵՐ ՑԵՂԵՐԸ ՅԵՎ ԲՈՒԾՈՒՄԸ

Ընդհանուր հասկացողություն ժառանգականության մասին։ Մետիզացիայի նշանակությունը ցածր արտադրողականություն ունեցող կենդանիների ամբերատվությունը արագ կերպով բարձրացնելու գործում։ Մաքուր բուծման նշանակությունը տավարի կուլտուրական ցեղերի պահպանման, լավացման գործում։

Տվյալ շրջանի խոշոր յեղջյուրավոր անասունի պլանային ցեղերը։ Սրանց հատկանիշները և արտադրողականությունը․ այդ ցեղերի նկատմամբ գործադրվող բուծման տարբեր յեղանակները տվյալ շրջանում և կոլտնտեսություններում։ Կենդանիների գնահատությունը և տոհմային ընտրությունը՝ ըստ արտաքին տեսքի, տոհմագրական տվյալների, արտադրողականությունն ստուգելու միջոցով և այլն։

Կենդանիների գրանցումը տոհմային գրքերում և նրանց նշանակությունը։

Ինչ արտոնություններ են տրվում մսամթերման ժամանակ այն կոլտնտեսություններին, վորոնց տոհմային անասունները գրանցված են միացյալ պետական տոհմային գրքում։ Կովի և ցուլի սեռական օրգանների կազմությունը։ Բեղմնավորման պրոցեսի եյությունը։ Ցուլիկների և յերինջների սեռական հասունացումը և առաջին զուգավորման ժամկետները։ Կովերի ծորանքի առաջանալու ժամկետները, ծորանքի արտաքին նշանները և տևողությունը։

Զուգավորման տարբեր ձևերը՝ ազատ զուգավորում, ձեռնաքաշ զուգավորում և արհեստական սերմնավորում։ Ազատ զուգավորման անթույլատրելի լինելը խոշոր յեղջյուրավոր անասունի նախիրներում։ Զուգավորման համար մեկ ցուլին տրվելիք կովերի թիվը տարվա սեզոնին և օրվա ընթացքում։ Կովերի զուգավորման և ծինի օրացույցը։ Հղիությունը, նրա տևողությունը և դրա նշանները տարբեր շրջաններում։ Մոտալուտ ծինի նշանները։

## ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ

(12 ժամ)

Բոլոր հորթերի պահպանումը և դաստիարակումը վորպես հոտը մեծացնելու և անասնապահության արագընթաց վերելքն ապահովելու հիմնական պայման։ Ծինը և կովի խնամքը ծնելու ժամանակ։ Կանոնավոր և անկանոն ծնելու նշանները։ Նորածին հորթի խնամքը (լորձունքի հեռացնելը, պորտ կտրելը և կապելը, հորթի մաքրելը, չորացնելը և այլն)։ Հորթերի կշռելը և պասպորտացումը։ Առաջին անգամ կաթ տալը և դալի նշանակությունը հորթի համար։ Ինչ պահանջներ են արվում հորթերին տրվող կաթի վորակի և ջերմության նկատմամբ։ Հորթին ինքնուրույն կաթ խմել սովորեցնելու ձևը։ Հորթին մոր կաթով



սնելու տևողությունը։ Հորթերին կաթ տալու նորմաները։ Անարատ կաթով սնելու տևողությունը։ Անարատ կաթից յերես քաշած կաթին անցնելու ձևը։ Յերես քաշած (սերզատած) կաթով սնվելու տևողությունը։ Հորթերին ուժեղ, կոպիտ և հյութալի կերով կերակրելու նորմաները և այդ կերերին սովորեցնելու կարգը։

Հանքային նյութերը և սրանց նշանակությունը հորթերի աճման և զարգացման գործում։

## ԿՈՎ ԿԹԵԼՈՒ ՅԵՎ ԿԱԹԸ ԽՆԱՄԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(12 ժամ)

Հանքային նյութերի նորմաները։ Հորթերին տրվող կերի վորակի նկատմամբ արվող պահանջները։ Հորթերի հետկաթնային շրջանի կերի նորմաները։ Հորթերի համար հարմար արոտի ընտրությունը։ Հորթերին արոտի սովորեցնելը և արածեցնելու կարգը։ Աղալների և ծածկոցների կազմակերպումը։ Հորթանոցների նկատմամբ առաջադրվող պահանջները (տաքություն, լույս, օդ, մաքրություն, չորություն, միջանցիկ քամիների բացակայություն և այլն)։ Հորթերի շենքերի խնամքը։ Հորթերի մարմնի խնամքը։ Հորթերին սպասարկելու համար գործադրվող ամանեղենի խնամքը։ Հորթանոցի աշխատանքների կարգը։ Հորթերին զբոսեցնելու կարգը տարբեր յեղանակներում։

Կովերին կանոնավոր կթելը և դրա ազդեցությունը կովի արտադրողականության վրա։ Կթելու ձևերը։ Բռունցքով կթելու ձևը և դրա առավելությունը կթելու այլ ձևերի նկատմամբ։ Կրծի խնամքը, մասաժը և լրացուցիչ կթումների ազդեցությունը ստացվող կաթի քանակի և վորակի վրա։ Կով կթելը լակտացիայի տարբեր շրջաններում։ Հիվանդ կուրծ ունեցող կովերին կթելը։ Հսկողություն կաթի մաքրության վրա՝ կթելու ժամանակ։ Կաթի կեղտոտության աստիճանը վորոշելը։ Կաթի խնամքը՝ կթելուց հետո․ կաթը քամելը, սառեցնելը՝ սառցարանի միջոցով, ջրի մեջ և այլն։ Սառեցնելու ձևերը․ կաթի սերզատումը և սերզատների խնամքը։ Կաթի պահպանումը և նրա փոխադրումը։ Կաթնամանների խնամքը․ կաթի արատները, պատճառը և պայքար այդ արատների դեմ։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

(10 ժամ)

Մշտական բրիգադը վորպես աշխատանքի կազմակերպման հիմնական ձև: Անասնապահական բրիգադներում աշխատող կոլտնտեսականների հոսունության վնասակար լինելը և պայքարն այս յերևույթի դեմ:

Պարտականությունների բաշխումը բրիգադի ներսում. աշխատանքի ծանրաբեռնման նորմաները: Տավարն առանձին կոլտնտեսականների ամրացնելու կարգը: Աշխատանքների գործավարձային գնահատումն աշխօրերով:

Գործավարձը մատղաշների մեծացման գործում (տոհմային և ապրանքային ֆերմաներում): Աշխօրերի հաշվառման ժամկետները. կոլտնտեսականների աշխատանքային գրքույկներում աշխօրեր գրանցելու ժամկետները: Կոլտնտեսականն ինչքան ժամանակով է ամրացվում ապրանքային ֆերմային: Ֆերմայի բոլոր ձևի աշխատանքների և աշխատողների աշխօրերի հաշվառման ցուցանիշները: Աշխատանքի հաշվառումը և աշխօրերի գրանցման կարգը կոլտնտեսականի աշխգրքույկում: Ինչ պայմաններում է կատարվում անասնապահական բրիգադի աշխօրերի հավելումը կամ պակասեցումը (աշխօրերի 10—20 տոկոսի սահմաններում): Բնամթերքով պարգևատրումներ: Անասնապահության զարգացման պետական պլանի առթիվ կուսակցության Կենտկոմի հուլիսյան պլենումի վորոշումների նշանակությունը: Անասնապահության զարգացման ասպարեզում պետական պլանային առաջադրումները կոլտնտեսության անասնապահության հիմքն են կազմում: Կոլտնտեսության արտադրական պլանը ժողովրդական տնտեսության պլանի բաղադրիչ մասն է: Ամեն մի ֆերմայի և բրիգադի տարեկան արտադրական առաջադրանքը: Այդ առաջադրանքը կազմելու կարգը: Ամսական առաջադրանքներ ամեն մի բրիգադի և կոլտնտեսականի: Ֆերմային տրվող արտադրական առաջադրանքների կատարման հսկողությունն ամեն մի բրիգադի և կոլտնտեսականի կողմից:

Սոցմրցման և հարվածայնության կազմակերպումը: Աշխատանքային դիսցիպլինան ամրացնելու համար մղած պայքարը վորպես հիմնական խնդիր «Կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին՝ ունևոր»՝ կուսակցության կողմից առաջադրված լոզունգի կենսագործման համար:



## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՑ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՖ-ՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԶՈՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄԻՆԻՄՈՒՄԸ

ԿԱՖ-ի վարիչ-բրիգադիրը խոշոր յեղջյուրավոր անասունների բուծման գծով պետք է իմանա.

1. Տվյալ կոլտնտեսությունում և շրջանում վորպես պլանային ցեղ ընդունված տավարի հիմնական հատկանիշները և արտադրական ցուցանիշները:
2. Մետիզացիայի նշանակությունն անասնապահության բարելավման գործում:
3. Կովերի բեր գալու (ցանկության) նշանները՝ ցանկության տևողությունը, կրկնվելու ժամկետները և հաջորդականությունը:
4. Ինչ հասակում պետք է առաջին անգամ զուգավորել ֆերմայում գտնվող տավարի տարբեր ցեղի յերինջներին և ցուլիկներին: Ինչ ժամանակ անջատել իրարից՝ առանձին պահելու համար:
5. Կոլտնտեսականների և մենատնտեսների կովերը ծածկելու համար հատուկ արտադրող ցուլ ունենալու կարիքը:
6. Վո՞ր կովերին պետք է ծածկել առաջին, յերկրորդ և յերրորդ բեր գալուց, ինչու չի կարելի բեր գալը բաց թողնել յերկու անգամից ավելի:
7. Քանի կով կարելի յե ծածկել մեկ ցուլ արտադրողով մեկ օրվա և ամբողջ զուգավորման ընթացքում:
8. Ինչպես պետք է կազմակերպել և անցկացնել կովերի ձեռնաքաշ զուգավորումը:
9. Ինչ առավելություն ունի ձեռնաքաշ զուգավորումն ազատ զուգավորման նկատմամբ:
10. Կովերի հղիության տևողությունը և հղիության նշանները:
11. Տվյալ նախրի կովերի ծինն ինչ ժամանակ է սպասվում:
12. Ինչպես վորոշել կովի ծնելու ժամկետը հղիության վերջին շրջանում արտահայտվող նշաններով:
13. Ինչպես է ընթանում կովերի նորմալ ծինը:
14. Ինչ դեպքերում կարելի յե խոտանել արտադրող ցուլերին, կովերին և մատղաշներին: Ինչ ժամանակ պետք է կատարել խոտանումը:

### Կերակրման գծով

1. Ինչպես պետք է կազմել կովերի, ցուլերի մատղաշների և բանող տավարի կերի նորմաները:

2. Ինչպես կազմակերպել կովերի խմբական կերակրումը: Վոր կենդանիներին պետք է առանձին կերակրել:

3. Ինչու համար հղի (հղիության յերկրորդ շրջանում) և ջահել կովերին հավելյալ կեր է տրվում:

4. Ինչպես պետք է կերակրել բարձր կաթնատու կովերին և տոհմացու մատղաշներին:

5. Ինչպես պետք է կերակրել արտադրողներին զուգավորման շրջանում և այդ շրջանից դուրս:

6. Տավարին կերակրելու համար ինչպես պետք է նախապատրաստել հարդը, մղեղը, արմատապտուղները, պալարապտուղները և այլ տեսակի կերը:

7. Ինչ դեպքերում են փչացած համարում հարդը, դարմանը, խոտը, սիլոսը, արմատապտուղները և կոլտնտեսությունում գտնվող այլ տեսակի կերը:

8. Ինչու համար տավարին հանքային նյութեր են տալիս, այդ նյութերի նորմաները և տավարին կերակրելու յեղանակը:

9. Տարեկան ինչ քանակի զանազան կեր է պահանջվում ֆերմայի մեկ գլուխ կովի և մատղաշ անասունի համար:

10. Ինչ միջոցառումներ պետք է անցկացնել արոտների նախապատրաստման և արոտային շրջանի նախորյակին:

11. Ինչպես պետք է կազմակերպել կենդանիների լրացուցիչ կերակրումն արոտային շրջանում: Դիշերային արածեցում:

12. Ինչպես պետք է տավարը մսուրային կերակրումից անցկացնել արոտային կերակրման և արոտային կերակրումից մսուրային կերակրման:

13. Ինչպես պետք է կազմակերպել մսացու տավարի բտումը:

14. Կերի նորմաները:

## Մատղաշների դաստիարակման գծով

1. Տվյալ ֆերմայում հորթերին կաթ խմեցնելու համար անարատ և յերեսը քաշած (սերզատած) կաթի ինչ նորմաներ են ընդունված:

2. Ինչպիսի կաթ պետք է տալ հորթերին՝ նրանց կյանքի առաջին 10—15 որերում:

3. Հորթերին անարատ կաթից յերեսը քաշած կաթի փոխանցելու կանոնները:

Հորթերի կերաբաժնի մեջ խտացրած՝ կոպիտ և հյութալի կեր մտցնելու կանոնները:



4. Ինչ պահանջներ է առաջադրվում հորթերին տրվող կաթի նկատմամբ: Խոտաջրով կերակրելու կարգը. ացիդոֆիլինով կերակրելը փորլուծի դեմ և ձկան յուղի ոգտագործումը:

5. Հանքային նյութերի նշանակությունը հորթերի համար. այդ նյութերի նորման և կերակրելու կարգը:

6. Ինչպիսի արոտներ պետք է տրամադրել հորթերին: Արոտներում ինչպիսի միջոցառումներ պետք է կատարել:

7. Ինչպես պետք է կազմակերպել արոտում հորթերին յերեսքաշած (սերզատած) կաթով և խտացրած կերով կերակրելու գործը:

8. Ինչպես պետք է անցկացնել հորթերին մսուրային խնամքից արոտային խնամքի և ընդհակառակը:

## Կով կթելու յեվ կաթնատնտեսության գծով

1. Կով կթելու կանոնները:

2. Ինչպես պետք է ստուգել՝ վոր կովը մաքուր է կթված:

3. Ֆերմայի և բրիգադի կաթ ստանալու տարեկան պլանը, նախրի որական կթի պլանը:

4. Ինչպես պետք է կազմակերպել և անցկացնել կոնտրոլ կթումները:

5. Կաթը խնամելու և պահպանելու կանոնները:

6. Կաթի և կաթնամթերքների տեղափոխման կանոնները: Կաթնամանների և կաթնամթերքների տարաների խնամքը:

7. Ինչպես պետք է վարվել սառցարանի, սերզատի և խնոցու հետ:

## Տավարի պահպանման յեվ խնամքի գծով

1. Լույսի, ջերմության, մաքրության, չորության և ոդի մաքրության տեսակետից ինչ պայմաններում պետք է լինեն գոմերը և հորթանոցները:

2. Տավար ջրելու կանոնները տարվա տարբեր շրջաններում:

3. Կովերի և արտադրողների խնամքի և պահպանման կանոնները:

4. Հղի կովին խնամելու և պահպանելու կանոնները:

5. Չար, կատաղի կենդանիներին անվնաս դարձնելու միջոցները. կենդանիների հետ վարվելու ձևը (ցուլերի քթին ող անցկացնելը, կովերի և ցուլերի յեղջյուրների ծայրերը կտրելը

կամ տաշելը, չար կովերին կթելու ժամանակ կապելը և այլն)։

6. Անասունների կաշին (մաքրումը, պայքարը պարազիտների դեմ) և վոտքերը խնամելու կանոնները (ինչպես մաքրել և կտրել պճեղները)։

7. Ինչպես վորոշել կովի տարիքը և ծիների թիվը յեղջյուրներով, իսկ յեղջյուր չունեցող կենդանիների տարիքը՝ ատամներով։

8. Հակահրդեհային միջոցառումները ֆերմայում։

## Տավարի հիվանդությունների դեմ պայքարելու գծով

1. Կենդանու հիվանդ լինելու նշանները։

2. Ինչպես պետք է կենդանիներին առաջին օգնությունը ցույց տալ՝ վիրավորվելիս, քերծվելիս, անհաջող ծնելու, պճեղների և յեղջյուրների վնասվելու և այլ դեպքերում։

3. Տարրական տեղեկություններ տավարի մեջ հաճախակի պատահող վարակիչ հիվանդությունների մասին (դաբաղ, սիբիրախտ, պիրոպլազմոզ, թոքատապ և այլն)։

4. Հիվանդությունների դեմ պայքարելու համար ձեռք առնվող նախազգուշական միջոցառումները։

5. Քոսով, բոռերի հարսնյակներով, այլ հիվանդություններով հիվանդ լինելու նշանները և դրանց դեմ պայքարելու միջոցները։

6. Հիվանդ կենդանիներին առանձնացնելու, շենքերն ախտահանելու կանոնները։ Ախտահանիչ նյութերի հետ վարվելու կանոնները։

## Պլանավորման, հաշվառման յեվ հաշվետվության գծով

1. Ֆերմայի վարիչը և բրիգադիրը պետք է լավ իմանան ֆերմայի անասունների զարգացման պետական պլանը, ինչպես և ֆերմային տրված մսամթերման և կաթնամթերման պլանը։

2. Ինչպես պետք է կազմել ֆերմայի և ֆերմայում աշխատող կոլտնտեսականի տարեկան և ամսական արտադրական առաջադրանքները։

3. Ինչպես պետք է կազմել զուգավորումների, ծնի և կերի սպառման պլանը։

4. Ինչպես պետք է կատարել ֆերմայի տավարի, ստացվող արտադրանքի, կերի ծախսման, զուգավորումների, ծնի, սերնդի թվի, կթի և ինվենտարի հաշվառումը։

5. Ֆերմայի հաշվետվության ձևերը և ներկայացնելու ժամկետները։



## Աշխատանքի կազմակերպման գծով

1. Ի՞նչ ցուցանիշների հիման վրա յե կատարվում տավարապահ-կով կթողների, հովիվների, հորթապահների, ցուլապահների և ֆերմայի այլ աշխատողների աշխատանքի վարձատրումը։

2. Տավարապահ-կով կթողներին կովեր ամրացնելու կարգը։

3. Ինչպես գնահատել կթելու աշխատանքը՝ կով կթողների, տավարապահների, հովիվների նկատմամբ։ Մատղաշների մեծացման համար կատարվող աշխատանքի գնահատման ձևը։

4. Ինչպիսի ցուցանիշների համար է ավելացվում կամ պակասեցվում ֆերմայի անասնապահական բրիգադի աշխատողների աշխօրերը (ընդհանուր աշխօրերի 10—20%-ի սահմաններում)։

## Տավարապահ կով կթողը պետք է իմանա

1. Տվյալ կոլտնտ. համար պլանային ցեղի հիմնական նշանները և ցուցանիշները։

2. Կովի ցուլի գալու (ցանկության) նշանները, սրա տևողությունը և նշանները։

3. Վո՞ր կովերին պետք է ծածկել 1-ին, 2-րդ և 3-րդ անգամ։

4. Ինչ հասակում պետք է թույլ տալ առաջին անգամ զուգավորվելու ֆերմայում գտնվող ցուլիկներին և յերինջներին։

5. Ինչ առավելություն ունի ձեռնաքաշ զուգավորումը ազատ զուգավորման համեմատությամբ։

6. Կովերի հղիության տևողությունը և հղիության նշանները։

7. Շատ կաթնատու կովերին ծնելուց առաջ արհեստականորեն ցամաքեցնելու կանոնները։

8. Հղիության վերջին օրերի նշաններով ինչպես վորոշել կովի ծնելու ժամկետը։

9. Իմանալ տավարապահին հանձնված կովերի ծիների թիվը (քանի անգամ են ծնել և քանի անգամ է սպասվում հետագա ծնունդ)։

10. Ինչպես է ընթանում կովերի նորմալ ծինը։

11. Ինչպես պետք է վարվել նոր ծնված հորթի հետ։ Հորթի փորից ինչ հեռավորության վրա, ինչպիսի թելով պետք է կապել նրա պորտը։

## Կովերին կերակրելու յեվ հորթերին կաթ խմեցնելու գծով

1. Տնտեսության մեջ գտնվող կերի մաքսիմալ քանակը, վոր կարելի յե տալ կովերին, ցուլերին և հորթերին՝ մեկ որում:

2. Տավարապահ-կթողին հանձնված կովերի կերի նորմաները:

3. Կոպիտ, խտացրած և հյութալի կերի կերակրման կանոնները և հաջորդականությունը:

4. Կերակրելուց առաջ ինչպես պետք է նախապատրաստել հարդը, մղեգը, արմատապտուղները, պալարապտուղները և այլ տեսակի կերը:

5. Վոր դեպքում փչացած և կերակրման համար անպետք են համարվում հարդը, խոտը, սիլոսը, արմատապտուղները և տնտեսության մեջ գտնվող այլ տեսակի կերը:

6. Տավարին տրվող հանքային նյութերի նորմաները և տալու կարգը:

7. Ինչպես պետք է կերակրել հղի կովերին հղիության 2-րդ շրջանում և ծնելու նախորյակին:

8. Տավարի, մասնավորապես հղի կովերի ջրելու կանոնները՝ ձմռան և ամռան շրջանում:

9. Որական քանի անգամ հորթերին պետք է կաթ խմեցնել՝ նրանց կյանքի առաջին որերում: Ինչքան կաթ տալ առաջին, յերկրորդ և հետագա որերում: Ինչպիսի կաթ խմեցնել, այդ կաթն ինչ ջերմություն պետք է ունենա:

10. Հորթն իր մոր կաթով մինչև քանի որ պետք է սնվի:

## Կով կթելու յեվ կաթի մաքրության գծով

1. Կովի առողջ և հիվանդ կուրծը խնամելու կանոնները:

2. Ինչպես պետք է կթել կովերը և մասսաժել նրանց կուրծը:

3. Ինչպես պետք է կթել կրծի հիվանդություններ ունեցող (մաստիտ, թոքախտ, կրծի բորբոքում, պտուկների ճաքճքած լինելը և այլն) կովերին:

4. Ինչպես պետք է ստուգել, թե վո՞ր կովն է մաքուր կթված:

5. Մաքրության նշանակությունը և կաթի պահպանման կանոնները:

6. Կաթի ամանեղենը մաքուր պահելու կանոնները և դրա նշանակությունը կաթնատնտեսության համար:



7. Ինչպես պետք է խնամել և պահպանել կաթը. ինչպես պետք է նախապատրաստել տեղափոխությունները (քամելը, սառեցնելը, բիդոնների ծածկումը, ղասավորումը և այլն):

8. Ինչպես պետք է սերզատել կաթը:

## Տավարի խնամքի յեվ պահպանման գծով

1. Ինչ պայմաններում պետք է լինի կովերի և հորթերի շենքը՝ լույսի, մաքրության, ջերմության և ոդի մաքրության տեսակետից:

2. Ինչպես պետք է խնամել կենդանու կաշին:

3. Կովերին կանոնավոր կապելու ձևերը: Մսուրներ, կերամաններ և գոմեր մաքրելու կանոնները:

4. Ինչ հիմնական պատճառներ են ազդում կովի որական կիթն իջեցնելու վրա:

5. Կենդանու հիվանդ լինելու նշանները:

6. Ինչպես պետք է առաջին ոգնությունը ցույց տալ կենդանու վիրավորվելու, քերծվելու, պճեղները վնասվելու, թմբկախտի (տիմպանիտի) դեպքում և այլն:

7. Վո՞ր կերը կարող է տավարի տիմպանիտ հիվանդություն առաջացնել:

8. Տարրական տեղեկություններ՝ տավարի մեջ հաճախակի պատահող վարակիչ հիվանդությունների մասին (դաբաղ, սիբիրախտ, պիրոպլազմոզ, թոքատապ և այլն):

9. Իմանալ սպասարկվող կովերի նշանները, համարները և անունները:

## Աշխատանքի կազմակերպման գծով

1. Տավարապահ կով կթողը քանի կով պետք է սպասարկի. ինչքան ժամանակ պետք է սպասարկի այդ կովերին:

2. Ի՞նչ ցուցանիշների հիման վրա յե կատարվում տավարապահ կով կթողների աշխորերի հաշվարկումը:

3. Ի՞նչ դեպքում է տրվում տավարապահ կով կթողներին իրենց ընդհանուր աշխորերի 10—20 տոկոսի չափով հավելումը կամ պակսեցումը:

## Հորթապահը ինչ պետք է իմանա

1. Տվյալ կոլտնտեսության պլանային ցեղի հիմնական նշանները և ցուցանիշները:

2. Տվյալ ֆերմայում տրվող կաթի և այլ կերի նորմաները: Կաթի և հետկաթնային շրջանների մասին:

3. Հորթերին որական քանի անգամ կաթ խմեցնել՝ նրանց կյանքի առաջին 10-օրում և հետագա շրջանում:

4. Հորթն իր մոր կաթով քանի օր պետք է սնվի:

5. Հորթին տրվող կաթն ինչպիսի ջերմություն պետք է ունենա:

6. Ինչքան կաթ պետք է տալ հորթին նրա ծնվելու առաջին օրը և ինչ չափով պետք է հետագա օրերում ավելացնել օրական տրվելիք կաթի քանակը:

7. Հորթին ինչ ժամանակից սկսած և ինչպես պետք է սովորեցնել յերես քաշած (սերզատած) կաթ տալուն:

8. Վ՞ր օրվանից սկսած հորթին կարելի յե ուժեղ (խտացրած) կեր տալ, և ինչպիսի կեր, ինչ դրությամբ և ինչ քանակի (օրական ինչքան ուժեղ կեր կարելի յե տալ սկզբնական շրջանում):

9. Ի՞նչ հասակից սկսած պետք է հորթերին խոտի սովորեցնել, ինչպիսի խոտ պետք է տալ նրանց:

10. Ինչպիսի հանքային նյութեր պետք է տալ հորթին, ինչ հասակից և ինչ քանակի: Ինչպես կերակրել հորթերին խոտաջրով և ձկան յուղով:

11. Ինչպես պետք է դաստիարակել Թոքախտավոր կովերից ծնված հորթերին:

12. Ինչպես պետք է պահել այն ամանները, վորոնցից հորթերը կաթ են խմում:

13. Լույսի, մաքրության, ջերմության, չորության, օդի մաքրության տեսակետից ինչպիսի պայմանների մեջ պետք է լինի հորթանոցը:

14. Ինչու հորթանոցում առանձնապես վնասակար են օդի սուր փոփոխումը և միջանցիկ սուր քամիները:

15. Ինչ հերթականությամբ պետք է մաքրել և հորթանոցից հեռացնել գոմաղբը և ինչպիսի ցամքար փռել:

16. Ինչ հասակից և ինչպիսի յեղանակում պետք է հորթերն զբոսանքի հանել: Զբոսանքի տևողությունն առաջին օրերում և հետագայում:

17. Ինչպիսի հերթականությամբ և ինչպես պետք է ախտահանել հորթերի վանդակները:



18. Հորթերի կաշին խնամելու կանոնները և պայքարը կաշվի պարազիտների դեմ:

19. Ինչու հինգ ամսական հասակից սկսած, ըստ տարբեր սեռերի պետք է առանձնացնել հորթերին և առանձին-առանձին պահել նրանց:

20. Հորթերին ինչ հասակից սկսած և օրվա վ՞ր ժամանակ արոտ դուրս բերել:

21. Հորթերի համար արոտի վ՞ր մասերը պետք է առանձնացնել: Արոտի այդ մասերում մինչև հորթերին արոտ դուրս բերելն ինչ միջոցներ ձեռք առնել:

22. Ինչպես պետք է սարքավորել հորթերի ամառային ագլուխները և շոգից, անբարենպաստ յեղանակից ու ճանճերից պաշտպանվելու համար պատրաստվող ծածկոցները:

23. Ինչպես պետք է կազմակերպել հորթերին Թան, ացիդոֆիլին և շիճուկ խմեցնելու և խտացրած կերով կերակրելու գործը:

24. Հորթերին մսուրային խնամքից արոտայինի, իսկ արոտայինից մսուրային խնամքի անցկացնելու պայմանները:

25. Հորթերի հիվանդ լինելու նշանները:

26. Ինչպես պետք է ցույց տալ առաջին ոգնությունը հորթերի վիրավորման, քերծվելու՝ պճեղների վնասման և ուռչելու դեպքերում:

27. Ինչ տեսակի կերը կարող է արոտում հորթերի փորուռուցք առաջացնել:

28. Հորթերի վարակիչ հիվանդությունների նշանները (սպիտակ փորլուծ, սեպտիցեմիա, պարատիֆ): Այդ հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցները:

29. Ացիդոֆիլինով հորթին կերակրելը և դրա նշանակությունը փորլուծի դեմ պայքարելու գործում:

30. Տարրական տեղեկություններ՝ հորթերի մոտ հաճախակի պատահող հիվանդությունների մասին (դաբաղ, սիբիրախտ, Թոքատապ և այլն):

31. Մեկ հորթապահը քանի հորթ պիտի սպասարկի:

32. Ինչ ցուցանիշների հիման վրա հորթապահներին աշխօրեր են տրվում:

33. Ինչպիսի պայմաններում հորթապահներին, վորպես նըվեր, հորթ է տրվում:

34. Ինչ պայմաններում ե պակասցվում կամ ավելացվում հորթապահների աշխարերի թիվը (10—20 ոռկոսի սահմաններում) բրիգադի հետ միասին։

## Տավարապահ հովիվն ինչ պետք ե իմանա

1. Տվյալ կոլտնտեսության խոշոր յեղջյուրավոր անասունի պլանային ցեղի հիմնական նշանները և ցուցանիշները։

2. Կովերի ցուլի գալու (ցանկության) նշանները։ Ցուլի գալու տևողությունը և կրկնվելու հաջորդականությունը։ Ինչպես կատարել զուգավորումների հաշվառումը նախրի մեջ։

3. Վոր կովերին պետք ե ծածկել տալ ցուլի գալու առաջին, 2-րդ և 3-րդ շրջանում։

4. Ֆերմայում գտնվող ցուլիկներին և յերինջներին ինչ հասակում պետք ե առաջին անգամ զուգավորել։

5. Ինչ առավելություններ ունի ձեռնաքաշ զուգավորումն ազատ զուգավորման և արհեստական սերմնավորումը ձեռնաքաշ զուգավորման համեմատությամբ։

6. Ինչպես պետք ե կազմակերպել և անցկացնել ձեռնաքաշ զուգավորումը։

7. Որական և սեզոնի ընթացքում քանի կով կարելի յե ծածկել յերիտասարդ և հասակն առած արտադրող ցուլով։

8. Կովերի հղիության տևողությունը և նշանները։

9. Ինչպես վորոշել կովերի ծնելու ժամկետները (հղիության վերջին շրջանի նշաններով)։

10. Ինչպես ե ընթանում նորմալ ծինը կովերի մոտ։

11. Ինչպես պետք ե վարվել հորթի հետ՝ նրա ծնվելուց անմիջապես հետո։

12. Կերակրումից առաջ ինչպես պետք ե նախապատրաստել հարդը, մղեղը, արմատապտուղները և այլ տեսակի կերը։

13. Ինչ դեպքում են փչացած համարվում կոլտնտեսություններում գտնվող հարդը, խոտը, սիլոսը, արմատապտուղները և այլ տեսակի կերը։

14. Ինչու չի կարելի մեկ օրվա պահանջից ավելի սիլոս հանել։

15. Արտադրող ցուլերին տրվող տարբեր կերի մաքսիմալ չափը։

16. Արտադրող ցուլերի կերակրման կանոնները և նորմաները. ինչպես պետք ե կերակրել արտադրողներին զուգավորման շրջանում։



17. Կովերին ջրելու կանոնները՝ մսուրային շրջանում և արոտներում։

18. Արտադրող ցուլերի խնամքի պայմանները։ Ինչ դեպքերում և ինչպիսի աշխատանք կարելի յե կատարել արտադրողների միջոցով։ Ինչպես պետք ե լինի ցուլի լծասարքը նման դեպքերում։

19. Ֆերմային կցված բանող ձիերի կերակրման և խնամքի կանոնները։

20. Չար և կատաղի կենդանիների հետ վարվելու նախազգուշական միջոցները (քթին օղ անցկացնելը, յեղջյուրների ծայրերը կտրելը կամ տաշելը և այլն)։

21. Լույսի, մաքրության, ջերմության, չորության, օդի, տարբեր մասերի մաքրության և օդափոխության տեսակետից ինչպիսի պայմաններում պետք ե լինի տավարի շենքը։

22. Ինչպես պետք ե մաքրել գոմը։

23. Տավարին մսուրային խնամքից արոտայինի, իսկ արոտայինից մսուրային պայմաններին անցկացնելու կարգը և հաջորդականությունը։

24. Նախքան կենդանիներին արոտ դուրս բերելը ինչ միջոցներ պետք ե ձեռնարկել արոտում։

25. Ինչպես պետք ե կազմակերպել կովերի գիշերային և անդադար (օր ու գիշերվա) արածեցումը։

26. Մինչ արոտ դուրս բերելն արոտների նախապատրաստման ասպարեզում ինչպիսի միջոցառումներ պետք ե կիրառել։

27. Արոտները լավագույն ձևով օգտագործելու կանոնները (տարբեր, առանձին հողամասերի բաժանելը, արածեցնելու կարգը տարբեր հողամասերում և նրա տևողությունը)։ Յերեքնուկի և այլ թիթեռնածաղիկ բույսեր արածեցնելու ժամանակ ձեռք առնվելիք նախազգուշական միջոցները։

28. Տվյալ կոլտնտեսության դաշտերում և արոտավայրերում ինչ թունավոր բույսեր են լինում (դաշտի մանանեխ, ծխախոտ, խոտ և այլն)։

29. Ինչպես պետք ե կազմակերպել տավարի լրացուցիչ կերակրումն արոտում։

30. Շոգից, անձրևից, կարկտից և անբարենպաստ յեղանակից պաշտպանվելու համար ինչպես պետք ե կազմակերպել ամառային կանգնելու տեղերը և ծածկոցները։

31. Արոտի ջուրը և ջուր խմելու վայրն ինչ պայմանների մեջ պետք է լինեն։

32. Կենդանիների հիվանդ լինելու նշանները։

33. Ինչպես պետք է կազմակերպել առաջին օգնությունը կենդանիների վիրավորելու, քերծվելու, պճեղները ճաքավելու և ուռչելու դեպքում։

34. Տարրական տեղեկություններ կենդանիների մեջ հաճախակի պատահող վարակիչ հիվանդությունների մասին (դաբաղ, սիբիրախտ, պիրոպլազմոզ, թոքատապ և այլն)։

35. Այդ հիվանդությունների դեմ պայքարելու նախազգուշական պարզ միջոցները։

36. Ինչու համար է անհրաժեշտ, որ հովիվը ամեն օր բրիգադիրին զեկուցի հոտում տեղի ունեցող բոլոր անցուդարձի վերաբերյալ (զուգավորում, ծնունդ, հիվանդություններ և այլն)։

37. Քանի կով պետք է սպասարկի տավարապահ հովիվը՝ մսուրային և արոտային շրջաններում։

38. Ինչ ցուցանիշներով է կատարվում տավարապահ հովվի աշխօրերի հաշվարկումը։

39. Ինչ դեպքերում են պակսեցնում աշխօրերը 10—20 տոկոսի սահմաններում։

## ՄԱՏՂԱՇՆԵՐԻՆ ԽՆԱՄՈՂ ՏԱՎԱՐԱՊԱՀ ՀՈՎԻՎՆ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ

1. Տվյալ կոլտնտեսության տավարի պլանային ցեղի հիմնական նշանները և արտադրական ցուցանիշները։

2. Կոլտնտեսության ցուլիկները և յերինջներն ինչ հասակից պետք է առաջին անգամ զուգավորել։

3. Կովերի հղիության տևողությունը և հղիության նշանները վերջին շրջանում։

4. Տնտեսության մեջ գտնվող կերի մաքսիմալ չափը, որ կարելի յե տալ մատղաշներին մի օրում։

5. Մատղաշների կերակրման համար տվյալ կոլտնտեսությունում ընդունված նորմաները։

6. Մատղաշների կերակրման կանոնները և տարբեր տեսակի կեր տալու հաջորդականությունը (կոպիտ, հյութալի, խտացրած և այլն)։

7. Ինչպես որոշել տնտեսության մեջ գտնվող կերի որակը։

8. Կերակրումից առաջ ինչպես պետք է նախապատրաստել հարդը, մղեղը, արմատապտուղը և այլ կերը։

9. Ինչու համար մատղաշներին լրացուցիչ հանքային նյութեր են տալիս, այդ նյութերի նորմաները և կերակրման կարգը։



10. Լույսի, մաքրության, ջերմության, չորության և օդափոխման տեսակետից ինչպիսի պայմաններ պետք է ունենա մատղաշների շենքը։

11. Ինչպես պետք է խնամել մատղաշների կաշին։

12. Ինչպես պետք է մաքրել հորթանոցը և կերամանները։

13. Ինչու անհրաժեշտ է 5 ամսական հասակից ցուլերին և յերինջներին առանձնացնել։

14. Մատղաշներին կապելու և կապի վրա պահելու կանոնները։

15. Ինչպես պետք է կազմակերպել մատղաշների զբոսանքը։

16. Ինչպես պետք է անցնել ձմեռային խնամքից արոտային և արոտայինից մսուրային խնամքին։

17. Ինչ միջոցառումներ ձեռք առնել տավարն արոտ դուրս բերելուց առաջ՝ արոտավայրի նախապատրաստման գործում։

18. Մատղաշներն արածեցնելու կանոնները, հոտի պահպանումն արոտում՝ գիշեր և ցերեկ։

19. Ինչպես պետք է արածեցնել մատղաշներին ցերեկ և գիշեր։

20. Արոտները լավագույն կերպով օգտագործելու կանոնները, տարբեր հողակտորների բաժանելը։

21. Առանձին հողակտորներում արածեցնելու կարգը և տևողությունը։ Յերեքնուկ և այլ թիթեռնածաղիկ բույսեր արածեցնելու ժամանակ ձեռք առնվող նախազգուշական միջոցները։

22. Ինչպես կազմակերպել անասունների կանգ առնելու տեղերը՝ ամառային շոգից և անբարենպաստ յեղանակից պաշտպանելու համար։

23. Տվյալ կոլտնտեսության արոտներում ինչպիսի թունավոր բույսեր են պատահում։

24. Ինչպես պետք է կազմակերպել մատղաշներին արոտում լրացուցիչ կեր տալը։

25. Արոտում ինչպես սարքել գիշերելու տեղերը։

26. Անասունի հիվանդ լինելու նշանները։

27. Ինչպես պետք է կենդանուն առաջին օգնությունը ցույց տալ վիրավորելու, քերծվելու, պճեղները ճաքավելու, փորուռուցքի դեպքում և այլն։

28. Տարրական տեղեկություններ՝ վարակիչ հիվանդությունների մասին (դաբաղ, սիբիրախտ, պիրոպլազմոզ, թոքատապ և այլն), սրանց դեմ պայքարելու համար ձեռք առնվելիք նախազգուշական միջոցները։

29. Մեկ տավարապահ հովիվը քանի գլուխ տավար պետք է սպասարկի ձմեռային և արոտային շրջաններում։

30. Ինչպիսի ցուցանիշների դեպքում մատղաշներ խնամող հովվին հավելյալ աշխատօրեր են տալիս։

31. Ինչ պայմաններում տավարապահ հովվին աշխատօրերի լրացուցիչ (աշխատօրերի ընդհանուր քանակի 15%-ի սահմաններում) հավելում է տրվում և ինչ դեպքում է պահվում աշխատօրերի ընդհանուր թվի 15 տոկոսը։

## ԾՐԱԳԻՐ

**ԽԱՖ-ի զոոտեխնիկական գիտելիքների: Ուսուցման տեվողությունը 3 ամիս, պարապմունքները՝ օրումեջ, օրական 2 ժամ։**

| Թեմայի անունը | Ժամերի թիվը |
|---|---|
| 1. Ներածություն | 4 ժամ |
| 2. Խոզերի կերը և կերակրումը | 24 » |
| 3. Խոզերի խնամքը և պահպանումը | 18 » |
| 4. Խոզերի ցեղերը և բուծումը | 12 » |
| 5. Գոճիների մեծացնելը | 12 » |
| Աշխատանքի կազմակերպումն ու պլանավորումը | 10 » |
| Ընդամենը | 80 ժամ |

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

Անասնապահությունը ԽՍՀՄ-ում վորպես ժողովրդական տնտեսության կարևորագույն մի ճյուղ։ Անասունների քանակի պակասելը գյուղատնտեսության վերակառուցման առաջին տարիները։ Երկրորդ հնգամյակում անասնապահությունն ամենարագ կերպով բարձրացնելու համար ստեղծված նախադրյալները (հացահատիկային պրոբլեմի լուծումը, գյուղատնտեսության մեքենայացումը, գյուղատնտեսության տեխնիկայի զարգացումը, և այլն)։

ՀամԿ(բ)Կ հունիսյան պլենումի վորոշումը անասնապահության զարգացման և բարելավման մասին։

Ստախանովյան շարժումը վորպես սոցմրցման բարձրագույն էտապ։ Ընկ. Ստալինի ճառը Կարմիր բանակի ակադեմիայի շրջանավարտների հանդեսին (1935 թ. մայիսի 4-ին)։ Ստախանովյան շարժման առաջացումն արդյունաբերության մեջ և տրանսպորտում։ Ստախանովյան շարժման զարգացումը գյուղատնտեսության մեջ և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում։ Ստախանովյան շարժման նշանակության գնահատությունը, վոր ընկ. Ստալինը տվել է յուր արտասանած ճառում՝ արդյունաբերության և տրանսպորտի ստախանովականների խորհրդակցությունում։ Ստախանովյան շարժման զարգացումը և խնդիրներն անասնապահության բնագավառում։ Կուսակցության և կառավարության ղեկավարների խորհրդակցությունն անասնապահության առաջավորների հետ։ Մատղաշները (հորթեր, գառներ, խոճկորներ, մտրուկներ) 100%-ով անկորուստ պահպանելու, մեծացնելու, օրական միջին աճը բարձրացնելու ասպարիզում տարվող պայքարը և դրա հետ կապված խնդիրները։ Առաջավոր անասնապահների փորձի լայն կիրառումն անասնապահության մեջ։

ԽԱՖ-ի լայնացումը և անասնապահության խորհտնտեսությունների ամրապնդումը վորպես հիմնական ողակ՝ անասնապահության բարձրացման համար մղվող պայքարի գործում։ Անասնապահական խորհտնտեսությունների հիմնական անելիքները (անասունների ցեղի լավացումը, օգնությունը ԽԱՖ-ին՝ վաճառքի ձևով խոշոր և մատղաշ անասուններ բաց թողնելը և այլն)։

Կոլտնտեսական անասնապահության կազմակերպման ամենալավ ձևը ԿԱՖ-ն է։

Գոյություն ունեցող ապրանքային ֆերմաների կազմակերպչական և տնտեսական ամրացումը և յուրաքանչյուր կոլտնտեսությունում ֆերմայի ստեղծումը վորպես կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կարևորագույն մի խնդիր։ Կոլտնտեսական ապրանքային ֆերմայի լայնացման հիմնական ուղիները և նրանց դերն անհատական ու կոլտնտեսական անասնապահության զարգացման գործում։ Ապրանքային ֆերմանե-

ը՝ բարձրացնելով կոլտնտեսականների և կոլտնտեսությունների յեկամուտը՝ կոլտնտեսականներին դեպի ունևոր կյանք են տանում:

ԿԱՖ-եր ունեցող կոլտնտեսությունների արտոնությունները՝ պետությանը կաթ և բուրդ հանձնելու գործում: Կայուն կերի բազան վորպես անհրաժեշտ մի պայման՝ անասնապահության բարձրացման համար:

ՀամԿ(բ)Կ հունիսյան պլենումի դիրեկտիվները՝ կերի բազայի լայնացման մասին: Կուսակցության հոգատարությունը կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելու գործում (անտոկոս վարկեր տրամադրելը, արտոնություններ՝ միս և կաթ հանձնելու գործում). կովազուրկ կոլտնտեսականների համար հորթ մեծացնող տնտեսություններին տրվող արտոնությունները: Դասակարգային զգոնության անհրաժեշտությունը պլանավորման գործում և պայքարն անասնապահության պլանները կատարելու ասպարեզում՝ դասակարգային թշնամու բոլոր տեսակի վոտնձգությունների դեմ:

Համկոմկուսի պլենումի վորոշումը՝ խոզաբուծական բներ կազմակերպելու մասին: Խոզի առավելությունն այլ անասունների հանդեպ (կերի օգտագործման, բեղունության, վաղահասության, բարձր սպանդային քաշ ունենալու, արդյունավետության արագ բարձրացման գործում և այլն):

Խոզերին համարակալելու սիստեմը և համարակալման ձևը:

## ԽՈԶԵՐԻ ԿԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ (24 ժամ)

Հասկացողություն խոզի մարմնի կազմության, մարսողական, շնչառության և արյունատար որգանների աշխատանքի մասին:

Հասկացողություն կերի բաղադրության և սննդարարության մասին:

Կերի միավորը վորպես կերի սննդարժեքի չափանիշ: Խտացրած, կոպիտ, ջրառատ, սիլոսացրած կերի տեսակները և արոտը: Այդ կերերի սննդարար արժեքը և նշանակությունը խոզերի կերակրման և չաղացման ժամանակ: Հանքային նյութեր (կիր, սեղանի աղ, մոխիր և այլն), նրանց նշանակությունն անասունների աճման և զարգացման գործում: Տեխնիկական բույսերի արտադրությունը և ճաշարանների կերակրի մնացորդները խոզերի սնուցման գործում: Կերի պատրաստման ձևը: Կերի նախապատրաստման համար գոյություն ունեցող մեքենաները, նրանց խնամքը



և վարվելաձևը: Կերի պահպանումը, խնամքն ու հսկողությունը:

Կերի վորակը վորոշելը՝ ըստ արտաքին տեսքի: Հասկացողություն կեսապահ և արդյունավետ կերի մասին: Խոզերի կենդանի քաշը վորոշելը՝ կշռելու և չափի միջոցով: Խոզերի համար կերաբաժին կազմելը, որինակ՝ հղի և ստերջ խոզամայրերի կերակրման առանձնահատկությունները: Խոզերի կերակրումը հղիության վերջին շրջանում, ծնելուց առաջ և ծնելուց հետո՝ առաջին որերը: Ծծմայր խոզերի կերակրումը: Արտադրող վարազների կերակրումը զուգավորման շրջանում և դրանից դուրս: Խոզերի բտման տարբեր տիպերը՝ բեկոնային, կիսաճարպային և ճարպային բտում: Կերակրման առանձնահատկություններն ամեն մի ձևի բտման դեպքում: Կերի նորմաները: Տարբեր ձևի կերի բացասական և դրական ազդեցությունը խոզի մսի վորակի վրա: Խոզանոցում տարվող ձմեռային աշխատանքները. կերի բաշխումն որվա ընթացքում: Արոտային կերակրման նշանակությունը խոզերի համար: Ինչպես պետք է անցնել խոզերի մսուրային կերակրումից արոտային կերակրման և ընդհակառակը: Արոտային շրջանի մեկ որվա կերակրման կարգը: Կոլտնտեսության արոտի բնութագիրը: Խոզերի համար արոտի ընտրությունը: Ամբողջ արոտային շրջանում խոզերին կանաչ կերով ապահովելու անհրաժեշտությունը:

Խոզերի համար արհեստական արոտի ընտրությունը: Միամյա և բազմամյա արոտներ և սրանց նշանակությունը խոզերի համար: Կերակրման զագոնային սիստեմը և նրա առավելությունը: Ինչպես պետք է անցնել խոզերի արոտային շրջանից մսուրային շրջանին և ընդհակառակը:

## ԽՈԶԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ (18 ժամ)

Խնամքի և պահպանման պայմանների ազդեցությունը խոզերի առողջության և արտադրողականության վրա: Ինչ պայմաններում պետք է լինեն խոզանոցները՝ լուսավորության, չորության, օդի, տաքության և մաքրության տեսակետից: Խոզանոցների խնամքը (մաքրություն, սպիտակեցում, ախտահանում և այլն): Խոզերի շենքերը ձմռան համար նախապատրաստելու անհրաժեշտությունը (վերանորոգելը, տաքացնելը և այլն): Աղբը դուրս տանելը և պահպանումը: Խոզերի խնամքը: Խոզանոցները խնամելու համար անհրաժեշտ ինվենտարը: Ինվենտարի պահելն ու խնամքը: Խոզերին սրածեցնելը և դրա

նշանակությունը. արտադրող վարազներին և հղի մայրերին խնամելու առանձնահատկությունը: Խոզերի պահանջը ջրի նկատմամբ. ջրի որակի և ջերմության նկատմամբ արվող հիմնական պահանջները: Հիվանդ և առողջ անասունների նշանները: Խոզերի հղիության և ծննդաբերության հետ կապված հիվանդությունները: Հասկացողություն խոզի վարակիչ հիվանդությունների պատճառների մասին: Խոզի կարեվորագույն վարակիչ հիվանդությունները և նրանց տարածման պատճառները տվյալ շրջանում: Խոզերի ժանտախտը և ռոժան: Հիվանդ անասունի խնամքը. հասկացողություն ախտահանման և նրա ձևերի մասին: Խոզերի պարազիտները՝ (վոջիլ, յերիզորդ և այլն) և պայքարը դրանց դեմ: Նախազգուշական միջոցներ (հիվանդ անասունների մեկուսացումը և այլն) և դրանց նշանակությունը հոտի առողջացման գործում: Անասնապահական և անասնաբուժական կանոնները, վերջինիս նշանակությունը և կիրառումը տվյալ կոլտնտեսությունում: Հիվանդ խոզերին իրարից անջատելու կանոնները և հիվանդ անասունների խնամքը:

ԾԱՆՈԹՈՒԹ.—Տվյալ խմբակում անցնելիք հիվանդությունների ցուցակը պետք է վերանայվի և կոնկրետացվի հողբաժնի անասնաբուժի կողմից:

## ԽՈԶԵՐԻ ՑԵՂԵՐԸ ՅԵՎ ԲՈՒԾՈՒՄԸ (12 ժամ)

Ընդհանուր հասկացողություն ժառանգականության մասին: Մետիզացիայի նշանակությունը խոզաբուծության մեջ: Մաքուր բուծման նշանակությունը կուլտուրական ցեղի անասունների պահպանման և առողջացման գործում:

Տվյալ շրջանի խոզերի պլանային ցեղերը. վերջիններիս նշանները և արտադրողականությունը: Այդ ցեղերի բուծման մեթոդները տվյալ շրջանում և կոլտնտեսությունում: Տոհմական նպատակով պահվող խոզերի գնահատականը: Ընտրությունը՝ ըստ նրանց ցեղի և տնտեսական օգտակար հատկությունների:

Պետական տոհմային մատյանները և դրանց նշանակությունը: Պետական տոհմային մատյաններում գրանցված՝ անասուն ունեցող կոլտնտեսությունների արտոնությունները: Արտադրող վարազի և մայր խոզի սեռական օրգանների կազմությունը: Բեղմնավորման էյությունը: Եգերի և արուների սեռական հասունացման և առաջին զուգավորման ժամկետը: Խոզի բեր գալու ժամանակը, նշանները և տևողությունը: Բեր յեկող



մայրերի հայտաբերումը: Բեղմնավորման ձևերը՝ ազատ և ձեռնաքաշ. վերջինիս առավելությունն ազատ զուգավորման համեմատությամբ: Մեկ արտադրող վարազին հատկացվող մայր խոզերի քանակը՝ տարբեր ձևի զուգավորումների դեպքում: Հղիությունը և նրա նշանները տարբեր շրջաններում: Ծննդի մոտալուտ նշանները:

## ԳՈՃԻՆԵՐ ՄԵԾԱՑՆԵԼԸ (12 ժամ)

Բոլոր գոճիների խնամքը և առողջ դրությամբ մեծացնելը վորպես հոտի լայնացման և անասնապահության ամենաարագ բարձրացման հիմնական պայման: Խոզերի ծնունդը և խնամքը՝ ծնելու ժամանակ: Խոզապահների անընդհատ հերթապահության կազմակերպումը: Կանոնավոր և աննորմալ ծննդաբերության նշանները: Նոր ծնվող գոճիների խնամքը (պորտ կարելը, մարմին չորացնելը և այլն): Գոճիներին մորը մոտեցնելու ժամանակը: Գոճիներին առանձին արկղում պահելու պատճառները: Ինչ ժամանակից պետք է գոճիներին կերակրել հանքային և խտացրած կերով: Ինչպիսի խտացրած կերով և ինչ դրությամբ պետք է կերակրել գոճիներին: Լրացուցիչ կեր տալու համար հարմարեցվող գոմերն ինչպիսի սարքավորում պիտի ունենան: Գոճիներին տարբեր կերի վարժեցնելու անհրաժեշտ զգուշությունը: Խառը կեր տալու անհրաժեշտությունը: Գոճիների կերի նախապատրաստելը: Կերի վորակի նկատմամբ յեղած պահանջը: Գոճիների կենդանի քաշի աճը: Գոճիները մորից բաժանելուց առաջ ինչպես պետք է կերակրել (կերակրելու առանձնահատկությունը): Գոճիները մորից բաժանելն ու խնամքը բաժանման ժամանակ: Գոճիների խնամքը՝ բաժանելուց հետո: Տնտեսության համար պահվող մատղաշների կերակրումը: Գոճիների զբոսանքի նշանակությունը և զբոսանքը՝ տարվա տարբեր յեղանակների ժամանակ: Գոճիների գոմի նկատմամբ ինչ պահանջներ պետք է անել (տաքության, չորության, օդի և մաքրության տեսակետից): Ինչպես սարքավորել սատնոկը մոր և գոճիների համար: Գոճիների գոմի խնամքը: Գոճիների մարմնի խնամքը: Ինչպես դասավորել գոճիների ամենօրյա կերակրելու աշխատանքը՝ կանոնավոր կարգացման համար: Գոճիների հիվանդությունները (փորլուծ, պարատիֆ և այլն). դրանց պատճառները և այլն: Նախազգուշական միջոցառումները: Հիվանդ գոճիների խնամքը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ (10 ժամ)

Աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը կայուն բրիգադն է։ Բրիգադների աշխատակիցների կազմի հոսունության վնասակարությունը և պայքարը նրա դեմ։ Աշխատանքի բաժանումը ձմռանը և ամռանը (խոզերին խնամելիս)։ Գործավարձը որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմք։ Պայքարը ձախ հավասարեցման և օրավարձի դեմ։ Գործավարձային հաշվարկումը և աշխօրերի հաշվելու կարգը։ Գործավարձային սիստեմը մատղաշների մեծացման գործում՝ ապրանքային և տոհմային ֆերմաներում։ Աշխօրերի հաշվառումը և դրանց գրանցումը կոլտնտեսականների աշխատանքային գրքույկներում. կոլտնտեսականը որքան ժամանակ է կցվում ֆերմային։ Աշխատանքի հաշվառումը և աշխօրերի գրացման կարգը կոլտնտեսականների աշխգրքույկներում։ Ինչ պայմաններում է կատարվում լրացուցիչ աշխօրերի ավելացում կամ պակսեցում (վաստակած աշխօրերի 10—15 տոկոսի սահմաններում) և նվիրատվություն բնամթերքով։ Հավելյալ վարձատրման կարգը ֆերմայում՝ աշխատանքի ստաժի դեպքերում։ Սոցմրցման և հարվածայնության կազմակերպումը։ Անասնապահության զարգացման պետական պլանի առթիվ կուսակցության Կենտկոմի հունիսյան պլենումի որոշումների նշանակությունը։ Պետական պլանի առաջադրանքը որպես հիմք կոլտնտեսական անասնապահության զարգացումը պլանավորելու գործում։ Կոլտնտեսության արտադրական ֆինանսական պլանը որպես ժողովրդական տնտեսության պլանի բաղկացուցիչ մի մասը։ Յուրաքանչյուր ֆերմայի և բրիգադի պետք է տալ տարեկան արտադրական պլանի առաջադրանքը։ Այդ առաջադրանքը կազմելու կարգը, յուրաքանչյուր կոլտնտեսականի և բրիգադի ամսական արտադրական առաջադրանքը։

Ֆերմային, բրիգադին տարեկան առաջադրանք տալը։ Այդ առաջադրանքները կազմելու ձևը և կարգը. յուրաքանչյուր կոլտնտեսականի և բրիգադի ամսական արտադրական առաջադրանքը։ Ֆերմային, բրիգադին, կոլտնտեսականին տրված արտադրական առաջադրանքների հսկողությունն ու հաշվառումը։

Աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդումը որպես կարևորագույն խնդիր «Կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր» դարձնելու՝ կուսակցության լոզունգի կենսագործման համար։



## ԽՈԶԱՊԱՀ ԲՐԻԳԱԴԻՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԸ

### Բուծման գծով

1. Տվյալ շրջանում ընդունված՝ խոզի պլանային ցեղերի հիմնական նշանները և ցուցանիշները։

2. Ինչ հասակից կարելի յե առաջին անգամ զուգավորել արու և եգ գոճիներին։

3. Ինչպես հայտաբերել բեր յեկող մայր խոզերին, իմանալ ցանկության տևողությունը և կրկնվելու հաջորդականությունը։

4. Ինչու համար ֆերման պետք է վորոշ վարազներ ջոկի կոլտնտեսականների և անհատ տնտեսությունների մայր խոզերին ծածկելու համար։

5. Ինչպես պետք է կազմակերպել մայր խոզերի ձեռնաքաշ զուգավորումը։

6. Իմանալ արտադրողների և մայր խոզերի բեղմնավորման կամպանիային նախապատրաստելու անհրաժեշտ աշխատանքները։

7. Քանի մայր խոզ կարելի յե ծածկել մեկ արտադրող վարազով մեկ օրվա և բեղմնավորման ամբողջ սեզոնի ընթացքում։

8 Ինչ առավելություններ ունի ձեռնաքաշ զուգավորումն այլ ձևի զուգավորումների համեմատությամբ։

9. Խոզի հղիության տևողությունը, նշանները, հղիության վորոշելը՝ տարբեր շրջաններում։

10. Խոզի ծնի և բեղմնավորման օրացույցը։

11. Ինչպիսի տնտեսական օգտակար նշաններով են ընտրում տոհմային նպատակների համար պահվող՝ արտադրող արուներին և մայրերին։ Ինչ նշաններով պետք է խոտանել մայր խոզերին և վարազներին։

12. Մայր խոզի և վարազի տոհմային օգտագործման տևողությունը։

### Խոզերի կերակրման գծով

1. Հասկացողություն խոզի մարմնի և կերի բաղադրիչ մասերի մասին։

2. Ինչպես կազմել մայր խոզերի, արտադրող վարազների, մատղաշների ու բտվող խոզերի կերաբաժինը։

3. Ինչպես կազմակերպել խմբական կերակրումը և վոր խոզերին պետք է առանձին կերակրել։

4. Տոհմական մայրացուներին, արտադրողներին և մատղաշներին կանոնավոր կերակրելու կարգը։

5. Ինչպես պետք է կերակրել արտադրող վարազներին բեղմնավորման շրջանում և այդ շրջանից դուրս։

6. Ինչպես նախապատրաստել մզեղը, արմատապտուղները և այլ տեսակի կերը՝ խոզերին կերակրելու համար։

7. Ինչ նշաններով կարելի յե ճանաչել փչացած խոտը, սիլոսը, արմատապտուղները և կոլտնտեսության մեջ գտնվող կերի այլ տեսակները։

8. Ինչու խոզերին լրացուցիչ կերպով հանքային նյութեր են տրվում. այդ նյութերի նորման և կերակրելու ձևը։

9. Մի մայրացու խոզի և ֆերմայի մատղաշների համար տարեկան ինչքան խտացրած, ջրառատ և կոպիտ կեր է պահանջվում։

10. Ինչ նախապատրաստական միջոցներ պետք է ձեռնարկել արոտավայրում՝ խոզերին արոտ հանելուց առաջ։

11. Արոտային շրջանում ինչպես պետք է կազմակերպել մայր խոզերի և գոճիների կերակրումը։

12. Ստերջ մայրերի և հղիության առաջին շրջանի կերակրումը։

13. Ինչպես կերակրել մերուններին՝ ծնելու առաջին օրերը, գոճիներին բաժանելուց հետո։

14. Վո՞ր կերը պետք է մանրացնել՝ խոզերին կերակրելու ժամանակ։

15. Վո՞ր կերը կարելի յե տալ յեփած և հում դրությամբ։

16. Կերը պատրաստելու համար գործադրվող մեքենաները։

## Խոզերին չաղացնելու գծով

1. Խոզերի չաղացման հիմնական ձևերը՝ բեկոնային և կիսաճարպային։

2. Վո՞ր խոզերին և ի՞նչ հասակում թողնել բեկոնային և ճարպային չաղացման համար։

3. Ինչու համար չաղացումը պետք է՞ ըստ ցեղերի կատարել։

4. Ինչպես պետք է մեծացնել գոճիներին՝ զանազան ձևի չաղացման համար։

5. Ինչպիսի կերով կարելի յե կերակրել խոզերին բեկոնային չաղացման առաջին և 2-րդ շրջանում։

6. Ինչպես կերակրել ըստ շրջանների և ինչ կերպով կերակրել կիսաճարպային չաղացման ժամանակ։



7. Ինչ տեսակ խոզերին և վոր հասակում ճարպային չաղացման համար նախապատրաստել։

8. Ըստ ցեղերի խոզերին ինչպես և ինչպիսի կերով կերակրել։

## Գոճիների աճեցման գծով

1. Ինչպես նախապատրաստել զագզյանը՝ մոր ծնունդն այնտեղ ընդունելու համար։

2. Ինչպես նախապատրաստել մորը ծննդի համար։

3 Ինչպիսի անհրաժեշտ գույք է հարկավոր ծննդի համար։

4. Ինչպես ընդունել գոճիներին ծննդից հետո։

5. Ինչու անհրաժեշտ է խոզի ընից ընկերքն անմիջապես հեռացնել։

6. Վորտեղ պետք է պահել գոճիներին մինչև ծննդի վերջանալը։

7. Ինչպես և ինչի համար նոր ծնված գոճիների ատամները պետք է կտրել։

8. Ինչքան ժամանակից հետո նոր ծնված գոճիներին մոր տակ պետք է թողնել։

9. Ինչ աստիճանի տաքություն պետք է ունենա գոմը, վորտեղ տեղի յե ունենալու ծնունդը և ուր պահվելու յեն նոր ծնվող գոճիները։

10. Ծծող գոճիներին ինչքան ժամանակից հետո անհրաժեշտ է դուրս թողնել ման գալու՝ ձմռանը և ամռանը։

11. Ծծող գոճիներին ինչպես սովորեցնել արոտի։

12. Ծնվելուց քանի օր հետո ծծող գոճիներին պետք է սովորեցնել հանքային նյութերի և խտացրած կերի։

13. Ծծող գոճիներին օրական քանի անգամ պետք է խտացրած կեր տալ։

14. Ինչպես պետք է պատրաստել կերը՝ գոճին մորից անջատելուց առաջ և հետո։

## Խոզերի խնամքի գծով

1. Խոզանոցը տաքության, չորության և օդի մաքրության տեսակետից ինչ պայմաններում պետք է լինի։

2. Վարազ խնամելու և պահելու կանոնները ամառվա արոտային շրջանում և ձմեռը գոմում յեղած ժամանակ,

3. Ինչ պայմաններ են ազդում արտադրող վարազների աշխատունակության տևողության վրա։

4. Ինչպես պետք է պահել ստերջ և հղի խոզերին ամառվա արոտային շրջանում և ձմեռային կերակրման շրջանում։

5. Նոր ծնած մայրերին ինչպես պետք է սովորեցնել արոտային պայմաններին՝ չաղացման առաջին շրջանում։

6. Ինչպես տանել խոզերին ճարպային և բեկոնային չաղացման ժամանակ՝ 1-ին և 2-րդ շրջանում։

## Հաշվառման, հաշվետվության յեվ աշխատանքի պլանավորման գծով

1. Ֆերմայի վարիչը և բրիգադիրը պետք է իմանան ֆերմայի անասնապահության զարգացման պետական պլանը, ինչպես նաև մսի և այլ մթերքների արտադրանքի հանձնման պլանը։

2. Ինչպես պետք է կազմել տարեկան և ամսական արտադրական առաջադրանքը բրիգադի և ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կոլտնտեսականի համար։

3. Ինչպես պետք է կազմել բեղմնավորման, ծննդաբերության և կերի ծախսման պլանը։

4. Ինչպես պետք է կատարել ֆերմայի անասունների կերի, բեղմնավորման, ծննդյան, աճի, կենդանի քաշի աճման, աշխատանքի և ինվենտարի հաշվառումը։

5. Ֆերմայի հաշվետվությունը ներկայացնելու ժամկետը և ձևերը։

6. Տեղական գրանցումների նշանակությունը և ծանոթացումն այդ ձևերին։

## Աշխատանքի կազմակերպման գծով

1. Ինչպիսի ցուցանիշներով պետք է հաշվել խոզապահների և ֆերմայի մյուս աշխատողների աշխորերը։

2. Մայր խոզերին առանձին խոզապահների և բրիգադներին պահել տալու կարգը։

3. Ամբողջ բրիգադի և խոզապահների գործավարձային գնահատումը։

4. Ֆերմայի աշխատողներին բնամթերքով նվեր տալու դեպքում ինչով առաջնորդվել։ Նվիրատվության կարգը։

5. Կոլտնտեսականների լավորակ կամ վատորակ աշխատանքի համար ինչ ցուցանիշներով պետք է ղեկավարվել և ինչ չափով պետք է պակասեցնել կամ ավելացնել բրիգադի աշխորերը (10—20%-ի սահմաններում)։



## Առողջապահական յեվ նախազգուշական միջոցառումների գծով

1. Խմելու ջրի նկատմամբ ինչ պահանջներ առաջադրել։

2. Խոզանոցի մաքուր ոդի նշանակությունը՝ խոզի օրգանիզմի կանոնավոր աշխատանքի տեսակետից։

3. Ինչպես պետք է պայքարել խոզանոցի կեղտոտ ոդի դեմ։

4. Ինչպես կռվել խոզերի պարազիտների դեմ։

5. Խոզերին լողացնելը և լողարանի սարքավորումը։

6. Ինչպես պետք է ախտահանել խոզանոցը։

7. Վորտեղ և ինչպես պետք է լվանալ կերամանները։

8. Խոզերի հիվանդության պատճառները։

9. Խոզերի հիվանդության նշանները։

10. Տարբեր հասակ ունեցող՝ առողջ և հիվանդ խոզերի մարմնի ջերմության աստիճանը։

11. խոզերի զանազան խմբերի համար անհրաժեշտ ջերմության աստիճանը խոզանոցում։

12 Ինչպես պայքարել խոզանոցի խոնավության դեմ։

13. Տվյալ ֆերմայի խոզանոցի վենտիլյացիան և նրա կանոնավոր ոգտագործումը։

14. Խոզերի վարակիչ հիվանդությունները՝ ժանտախտ, ռոժա, պարատիֆ, գոճիների սպիտակ փորլուծ և այլն։

15. Գոճիների սպիտակ փորլուծով հիվանդանալու պատճառները։

16. Ինչպես նախազգուշանալ գոճիների սպիտակ փորլուծով հիվանդանալուց։

17. Գոճիների յերկրորդային հիվանդությունները և նախազգուշական միջոցները։

18. Ինչպես տեղափոխել սատկած խոզերի դիակները։

19. Վորտեղ և ինչպես կազմակերպել գերեզմանոց՝ սատկած խոզերի համար։

## ԽՈԶԱՊԱՀԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԸ

### I. Խոզ բուծելու ձևերը

1. Մաքուր բուծում, տրամախաչում։
2. Խոզերի սեռական հասունության ժամկետները։
3. Առաջին զուգավորման ժամկետները։
4. Ինչպես վորոշել խոզերի բեր գալն ըստ արտաքին նշանների։
5. Ինչպես նախապատրաստել վարազին և մայր խոզին զուգավորման համար։
6. Զուգավորման կանոնները։
7. Խոզերի հղիության տևողությունը։
8. Խոզերի հղիության այս կամ այն շրջանը վորոշելն ըստ արտաքին տեսքի։
9. Խոզերին նշան անելը։
10. Գոճիներին կշռելը։
11. Տոհմային գրանցման նշանակությունը խոզաբուծության համար։

### II. Կերի տեսակները, կերակրումը յեվ չաղացումը

1. Հասկացողություն կերի բաղադրության մասին։
2. Կերի տեսակներն ըստ խմբերի՝ խտացրած, ջրառատ, կոպիտ կերի տեսակները և հանքային նյութեր։
3. Հանքային նյութերի նշանակությունը խոզերի համար։
4. Հատիկային, ջրառատ, կոպիտ կեր և արմատապտղապտուղներ նախապատրաստելը։
5. Կերը նախապատրաստելու համար գործադրվող մեքենաները։
6. Հասունացած, սերմ և հղի խոզերի կերակրումը հղիության առաջին և յերկրորդ շրջանում։
7. Նոր ծնած խոզի կերակրումը ծնելու առաջին որը և գոճիները բաժանելուց հետո։
8. Արտադրող վարազների կերակրումը զուգավորման շրջանում և այդ շրջանից դուրս։
9. Բտման հիմնական ձևերը և առանձնահատկությունները։ Խոզերի բեկոնային, կիսաճարպային և ճարպային բտումը։



10. Խոզերի կերակրումը զանազան ձևի բտման ժամանակ և ըստ շրջանների։

### III. Խոզերի պահպանումը յեվ խնամքը

1. Լույսի, տաքության աստիճանի, մաքրության, չորության և օդի մաքրության նկատմամբ խոզերի գոմերն ինչ պայմաններում պետք է լինեն։
2. Խոզերի խնամքի և պահպանման առանձնահատկությունները՝ ամառվա արոտային և ձմեռվա շրջանում։
3. Սերմ մայրերի և հղի մայրերի խնամքը հղիության առաջին և յերկրորդ շրջանում։
4. Կերակրող մայրերի խնամքը։
5. Վարազի պահպանումը և խնամքը։
6. Կեր բաժանելու կարգը։
7. Կերը պատրաստելու ժամանակը՝ կերակրելուց առաջ։
8. Խոզանոցը մաքրելը և կարգի բերելը։
9. Խոզ արածեցնելը։

### IV. Գոճիներ մեծացնելը

1. Ինչպես անել, վոր գոճիների ծնունդը կանոնավոր կերպով ընթանա։
2. Նոր ծնված գոճիների խնամքը։
3. Ծնված գոճիների խնամքը և լրացուցիչ կերակրումը։
4. Գոճիների ձմեռային և ամառային զբոսանքը։
5. Գոճիներին լրացուցիչ կեր տալը (կովի կաթով, չոր հատիկով և հանքային նյութերով)։
6. Մորից անջատած գոճիների խնամքը, պահպանումը և կերակրումն արոտային և ձմեռային շրջանում։

### V. Աշխատանքի կազմակերպումը

1. Քանի մայրացու խոզ պետք է սպասարկի բրիգադը և բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականը։
2. Ինչ ցուցանիշներով է կատարվում ամբողջ բրիգադի և մասնավորապես խոզապահի աշխորերի հաշվառումը։
3. Ինչ պայմաններում է կատարվում աշխորերի թվի լրացուցիչ հաշվառումը և բնավճարով գոճի նվեր տալը։

4. Ինչ բանի համար կարող են խոզապահական բրիգադի աշխորերը պակսեցվել կամ ավելացնել և քանի տոկոսով:

## VI. Խոզի հիվանդությունները ու վերջիններիս կանխումը

1. Խոզերի հիվանդության նշանները:

2. Վարակիչ հիվանդություններ՝ ժանտախտ, ռոժա, գոճիների սպիտակ փորլուծ և այլն:

3. Խոզերի ջերմզորդային հիվանդությունները և նրանց դեմ պայքարելու միջոցները:

4. Խոզի հիվանդության դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելը:

5. Խոզերի հիվանդանալու պատճառները՝ անկանոն կերակրումը, խոնավությունն ու ցուրտը, խոզանոցի կեղտոտությունը և անկանոն խնամքը:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎՈՉԽԱՐԱՊԱՀԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՅՈՒՄ

**Ուսման տևողությունը յերեք ամիս, պարապմունքները՝ օրական 2-ական ժամով**

| Թեմաների անունը | Ժամերի թիվը |
|---|---|
| 1. Ներածություն | 4 ժամ |
| 2. Վոչխարների կերը և կերակրումը | 18 » |
| 3. Վոչխարների խնամքը և պահպանումը | 12 » |
| 4. Վոչխարների ցեղերը և բուծումը | 14 » |
| 5. Գառների խնամքը | 10 » |
| 6. Վոչխարապահական արտադրանքը | 12 » |
| 7. Աշխատանքի կազմակերպումը և պլանավորումը | 10 » |
| ընդամենը | 80 ժամ |



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

Անասնապահությունը վորպես ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության կարևորագույն մի ճյուղը: Գյուղատնտեսության վերակառուցման առաջին տարիներում անասունների պակասելու պատճառները: Յերկրորդ հնգամյակում անասնապահությունն ամենաարագ կերպով բարձրացնելու համար ստեղծված հիմնական նախադրյալները

**Կոլտնտեսապրանքային ֆերմաների լայնացումը** և անասնապահական խորհտնտեսությունների՝ վորպես անասնապահության զարգացման հիմնական ողակների, ամրապնդումը: Անասնապահական խորհտնտեսությունների հիմնական խնդիրները (անասունների ցեղի բարելավումը, ոգնություն ԿԱՖ-ին մեծ և մատղաշ անասուններ տալու միջոցով):

Կոլտնտեսական անասնապահությունը կազմակերպելու ամենալավ ձևը ԿԱՖ-ն է: Գոյություն ունեցող կոլտնտապրանքային ֆերմաների կազմակերպչական ամրապնդումը և յուրաքանչյուր կոլտնտեսությունում նոր ֆերմա ստեղծելը կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կարևորագույն խնդիրներն են հանդիսանում:

ԿԱՖ-երի լայնացման հիմնական ուղին և ֆերմաների դերն անհատական անասնապահության զարգացման խնդրում. կոլտնտապրանքային անասնապահական ֆերմաները՝ բարձրացնելով կոլտնտեսության և կոլտնտեսականների յեկամուտը՝ ստեղծում են նրանց համար ունևոր կյանք: Կոլտնտապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսականների արտոնությունները՝ մսի, կաթի, բրդի հանձնման ժամանակ: Կայուն կերի բազան վորպես անհրաժեշտ նախապայման՝ անասնապահությունը բարձրացնելու և զարգացնելու ասպարեզում:

Կուսակցության Կենտկոմի հունիսյան պլենումի դիրեկտիվները՝ կերի բազայի լայնացման մասին: Կուսակցության հոգատարությունը՝ կովազուրկ կոլտնտեսականներին կովով ապահովելու մասին (տրամադրել անտոկոս վարկեր, մսի և կաթ հանձնելու ժամանակ արտոնություններ տալով այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վորոնք կովազուրկ կոլխոզնիկներին վաճառելու համար հորթեր են մեծացնում): Անասնապահության զարգացման պետական պլանի կազմակերպումը և նրա նշանա-

կությունը։ Դասակարգային զգոնության անհրաժեշտությունը՝ պայքարելու բոլոր այն փորձերի դեմ, վորոնցով կաշխատեն արգելք ստեղծել անասնապահական պետական պլանների կատարմանը։

## ՎՈՉԽԱՐԻ ԿԵՐԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ (18 ժամ)

Հասկացողություն վոչխարի մարմնի կազմության, սննդառության, շնչառության և արյունատար որգանների աշխատանքի մասին։ Հասկացողություն զանազան տեսակի կերի բաղադրության և սննդարժեքի մասին։ Հասկացողություն կերի մարսողության և յուրացման մասին։ Կերի միավորը վորպես կերի սննդարժեքի չափանիշ։ Կոպիտ, խոտացրած, ջրառատ, սիլոսացրած կեր և արոտներ։ Հանքային նյութեր (կիր, սովորական աղ, մոխիր և այլն), սրանց ազդեցությունն անասունների աճման և զարգացման վրա։ Կերի տեղափոխումը և պահպանումը։ Կերը պահպանելու ժամանակամիջոցում յեղած անհրաժեշտ հսկողությունը և խնամքը։ Հասկացողություն կենսապահ և արդյունավետ կերի մասին։ Ինչպես պատրաստել վոչխարների համար կերաբաժիններ (որինակներով)։ Հղի վոչխարների առաջին և 2-րդ շրջանի կերակրման առանձնահատկությունները։ Խոյերի կերակրելը զուգավորման շրջանում և դրանից դուրս յեղած ժամանակամիջոցում. խոյերի և վոչխարների խմբակային կերակրման կազմակերպումը։ Ցեղական անասունների առանձին կերակրումը։ Վոչխարների կերակրելը գոմում և բակում։ Սրանց առավելությունները և թերությունները։ Վոչխարների ձմեռային բտման կազմակերպումը, արոտավայրերի ընտրությունը և անհրաժեշտ ինվենտարը։

Արոտավայրերի տեսակները և նրանց օգտագործման պլանի կազմումը։ Վոչխարներն արոտ հանելու նախապատրաստումը, յերկար կճղակները կտրելը, աչքերի շուրջը յեղած բուրդը (մերինոս ցեղի) և յետևի մասի գնջիկները խուզելը։ Առավոտյան վաղ ցրտին արոտ դուրս բերելու և ճահճացած, ցածրադիր, խոնավ և շռաքյաթ տեղերում արածեցնելու անթույլատրելիությունը։ Սեզային արոտավայրերի վնասակարությունը նրբագեղմ վոչխարների համար։ Ջրելու և արածեցնելու կանոնները։ Ցրված դրությամբ արածեցնելու անհրաժեշտությունը։ Արածեցնելու



ժամանակ արևի, քամու ուղղությունը հաշվի առնելու կարևորությունը։

Վոչխարներին ջրելը փոքր խմբերով և չքրտնած ժամանակ։ Հիվանդություններից խուսափելու համար՝ պղտոր և փոս տեղերում կանգնած ջրերից ջուր խմեցնելու վնասակարությունը։ Արոտի փոխելը վորպես կարևորագույն մի միջոց հոտի առողջացման և արոտների վորակը բարձրացնելու գործում։ Ձմռան նախապատրաստվելը։ Հոտերի կազմակերպման ժամանակը և կանոնները՝ բտման ժամանակ։ Ոժանդակ կերերով բտումը։ Հասկացողություն բտման ընթացքի և վոչխարների զանազան խմբերի քաշի ավելացման մասին։

## ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ (12 ժամ)

Ինչպես են ազդում խնամելու և պահպանելու պայմանները վոչխարների առողջության և արտադրողականության վրա։ Վոչխարների գոմն ինչպես պետք է լինի՝ լույսի, օդի, չորության և այլ պայմանների տեսակետից։ Վոչխարներին գոմերում տեղավորելը և գոմերի նախապատրաստումը ձմռան համար (վերանորոգում, տաքացում, ախտահանում և այլն)։ Վոչխարը ջրելու կարգը և պահանջը ջրի վորակի նկատմամբ։ Հղի վոչխարների և արտադրող խոյերի խնամքի առանձնահատկությունը։ Ծնի շրջանում գոմերն առանձին մասերի բաժանելը։ Հիվանդ և առողջ անասունի նշանները։ Անասունների քերծվելու և վիրավորվելու ժամանակ անասնաբուժական օգնություն ցույց տալը։ Վոչխարների ստամոքսաղիքային հիվանդությունները՝ փորուռուցքը և այլն)։ Հղիության և ծնի հետ կապված հիվանդությունները։

**Ծանոթություն.**—Նյութը մշակելու ժամանակ ուշադրությունը գլխավորապես պետք է դարձնել հետևյալ հարցերի վրա՝ հիվանդության պատճառները և նրանց դեմ ձեռք առնվելիք նախազգուշական միջոցները. հիվանդ անասունի խնամքը և այլն։

Հասկացողություն վարակիչ հիվանդությունների և այդ հիվանդություններն առաջացնող պատճառների մասին։ Վոչխարների մեջ շատ տարածված վարակիչ հիվանդությունները (ծաղիկ, քոս, սիբիրախտ), նրանց նշանները և տարածման միջոցները։

*Հիվանդ անասունի խնամքը, ախտահանումը և նրա նշանակությունը: Ախտահանման ձևերը: Անասունների պարազիտները (վորդեր, բոռեր, և այլն) և պայքարը նրանց դեմ: Նախազգուշական միջոցառումները՝ վորոշ ժամանակ առանձնացնելը, նախազգուշական լողացում դեհելմենտիզացիա և նրա նշանակությունը վոչխարի հոտի առողջացման գործում: Զոոանասնաբուժական մինիմումը և նրա անցկացումը տվյալ կոլտնտեսության մեջ և ռայոնում: Հիվանդ կենդանիներին իրարից անջատելը և հիվանդ անասունի խնամքն ու կանոնները:*

Ծանոթություն.— *Ծրագրում մեջ բերված հիվանդությունները, վորոնց մասին պետք է խոսել խմբակում պարապմունքի ժամանակ, պետք է ավելի խորացվեն շրջանի անասնաբուժի կողմից:*

## ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՑԵՂԵՐԸ ՅԵՎ ԲՈՒԾՈՒՄԸ (14 ժամ)

*Ընդհանուր հասկացողություն ժառանգականության մասին: Մետիզացիայի նշանակությունը վորպես սակավարդյունավետ անասուններին ամենարագ կերպով լավացնելու միջոց: Մաքուր բուծման նշանակությունը տավարի կուլտուրական ցեղերի լավացման և պահպանման գործում: Տվյալ շրջանի վոչխարների պլանային ցեղերը, նրանց արտաքին նշանները և արտադրողականությունը: Տվյալ շրջանում և կոլտնտեսությունում այդ ցեղերի բուծման մեթոդները:*

*Խոյի և վոչխարի սեռական օրգանների կազմությունը: Բեղմնավորման պրոցեսի ներքին էությունը: Շիշակ արուների և շիշակ եգերի հասունությունը և առաջին զուգավորման ժամկետը: Վոչխարների բեր գալու ժամանակամիջոցը, նշանները և տևողությունը: Բեր չեկող մայրերին փորձախոյի միջոցով հայտաբերելը: Փորձախոյի խնամքը, վոչխարների բեղմնավորման ձևերը՝ ազատ, խմբակային, ձեռնաքաշ և արհեստական սերմանում: Ազատ զուգավորման բացասական կողմերը և ձեռնաքաշ զուգավորման առավելությունները. արհեստական սերմանումը և դրա լայն փորձնական կիրառումը վոչխարաբուծության մեջ:*

*Մի արտադրող խոյի տարեկան կարողությունը զանազան ձևի զուգավորումների ժամանակ: Կենդանիներին զուգավորման համար նախապատրաստելը. բոնիտիրովկա: Խոյերի տոհմային ընտրությունը: Վոչխարներին նշան անելը: Վոչխարներին տոհ-*



*մային գրքերում գրանցելու ձևը և դրանց նշանակությունը: Ինչ արտոնություններ են տրվում մսամթերման ժամանակ այն կոլտնտեսություններին, վորոնց կենդանիները գրանցված են պետական Տոհմային միասնական գրքում:*

## ԳԱՌՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ (10 ժամ)

*Բոլոր գառներին առողջ դրությամբ պահելը և մեծացնելը վորպես հիմնական պայման՝ վոչխարների հոտը լայնացնելու և անասնապահությունն ամենարագ կերպով զարգացնելու գործում: Գարնան ծնի կամպանյան դիմավորելը և անհրաժեշտ ինվենտարի նախապատրաստումը: Նորմալ և աննորմալ ծննդի նշանները: Մոր և գառան խնամքը ծնի ժամանակ (առատ և մաքուր ցամքար, առաջին կաթիլները գետին կթելը, կրծի չորս կողմը գտնված բուրդը խուզելը, նրա մաքրությունը և այլն): Գառան խնամքը՝ ծնելուց հետո: Ինչպես սովորեցնել մայրերին գառներին ընդունել: Չընդունելու դեպքում ուրիշ վոչխարի միջոցով կերակրելը և այլ մայր-դայակի նշանակությունը գառների մեծացման գործում:*

*Սակմանների կազմակերպումը (միատեսակ հասակ ունեցող գառների խմբեր) և նշանակությունը գառների մեծացման ժամանակ: Գառներին խտացրած, կոպիտ, ջրառատ կերի և արոտի վարժեցնելու ժամանակը և կարգը: Հանքային նյութերը և դրանց նշանակությունը գառների աճման և զարգացման համար: Գառների կերի նախապատրաստումը: Գոմի սարքավորումը գառներին կերակրելու ժամանակ: Գառներին մայրերից անջատելը: Գառների խնամքը մայրերից անջատելուց հետո: Ինչպես կազմակերպել գառների առաջին զբոսանքը: Գառան հիվանդությունները (սպիտակ փորլուծ և այլ հիվանդություններ, նրանց նշանները և պատճառները):*

*Նախազգուշական միջոցներ և հիվանդ գառան խնամքը:*

## ՎՈՉԽԱՐԱՊԱՀԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ (12 ժամ)

*1. Բրդի տեսակները, նրա վորակը և նշանակությունն արդյունաբերության համար: Բրդի աճման վրա ազդող գործոնները: Խուզի ժամանակը, խուզի նախապատրաստումը, անհրաժեշտ գործիքները և հոտի կազմակերպումը խուզի համար: Վոչխար*

խուզելու կարգը, ձեռքի և մեխանիկական խուզ։ Բրդի նախնական տեսակավորումը և հակ կապելը։ Աշխատանքի կազմակերպումը խուզի ժամանակ։ Բրդի ստանդարտը։

2. Վոչխարների խոտանման կարգը և ժամանակը։ Շատ մատղաշ և նիհար անասուններ մորթելու արգելումը։

3. Վոչխարի կաթի քիմ. կազմությունը։ Վոչխար կթելու կարգը և ժամանակը։

4. Գառների անջատումը, առանց վնասելու նրանց աճման պրոցեսը։ Վոչխարների կթվող ցեղերը և նրանց արտադրողականությունը։ Կթի համար պատրաստած սարքը։ Կթի համար յեղած անհրաժեշտ ինվենտարը։ Կթելու տեխնիկան, կաթի վերամշակումը։ Բարձր վորակի կաթնամթերք ստանալու առաջնակարգ պայմանները։ Կթի և կաթնամթերքի վերամշակման ժամանակ յեղած անհրաժեշտ մաքրությունը։ Մուշտակների և մորթիների մշակումը, պահպանումը, նախնական տեսակավորումը և կոնսերվացումը։ Մորթիների և կաշվի ստանդարտը։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ (10 ժամ)

Մշտական բրիգադը վորպես աշխատանքի կազմակերպման մի հիմնական ձև։ Աշխատանքի կազմակերպումը վոչխարապահական բրիգադում։ Կոլտնտեսականներին վոչխարներ ամրացնելու կարգը և աշխատանքի նորմաները։ Աշխատանքի գործարքային գնահատումն աշխորերով։ Գործարքը տոհմային և ապրանքային ֆերմաներում՝ մատղաշների մեծացման գործում։ Աշխորերի հաշվառման և նրանց գրանցման ժամկետները կոլտնտեսականների աշխատանքային գրքույկներում։ Կոլտնտեսականն ինչքան ժամանակով է կցվում ֆերմային։ Ֆերմայի բոլոր աշխատանքների և աշխատողների աշխորերի հաշվառման ցուցանիշները։ Պարգևատրումները բնամթերքով։ Համկոմկուսը հունիսյան պլենումի վորոշման նշանակությունը անասնապահության զարգացման մասին։ Անասնապահության զարգացման համար պետական պլանային առաջադրանքը վորպես հիմք՝ պլանավորելու կոլտնտեսական անասնապահության զարգացումը։ Կոլտնտեսության արտադրական պլանը ժողովրդական տնտեսության պլանի հիմնական մասն է կազմում։ Յուրաքանչյուր ֆերմային և բրիգադին պետք է տալ տարեկան արտադրական առաջադրանք։ Այս առաջադրանքը կազմելու կարգը։ Յուրաքանչյուր կոլտնտեսականին և բրիգադին ամսական արտադրական առաջադրանք տալու անհրաժեշտությունը։ Արտադրական առաջադրանքի կատարման հաշվառումը և հսկողությունը՝ ֆերմայի, բրիգադի և յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի նկատմամբ։ Հարվածայնության և սոցմրցման կազմակերպումը։ Պայքարն աշխատանքային դիսցիպլինայի համար վորպես հիմնական խնդիր՝ կուսակցության կողմից առաջադրված «կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին՝ ունևոր» լոզունգի կենսագործման ասպարեզում։ Անասնապ. բրիգադի աշխորերի իջեցման և բարձրացման կարգը (10—20%-ի սահմաններում)։



## ԲՐԻԳԱԴԻՐ ՀՈՎՎԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՋՈՈՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԸ

### Վոչխարների բուծման գծով

1. Տվյալ շրջանի և կոլտնտեսության պլանային ցեղի վոչխարների հիմնական նշանները և արտադրական ցուցանիշները։

2. Ինչպես վորոշել վոչխարների բեր գալու նշանները, տևողությունը և կրկնվելու հաջորդականության կարգը։

3. Առաջին անգամ ինչ հասակում կարելի յե թույլ տալ զուգավորվելու տվյալ ցեղի վոչխարներին և խոյերին։

4. Ինչու պետք է կոլտնտեսականների և մենատնտեսների վոչխարները ծածկելու համար ֆերման առանձին խոյեր առանձնացնի։

5. Ինչպես պետք է կազմակերպել զուգավորման բոլոր ձևերը։

6. Իմանալ և կարողանալ անցկացնել վոչխարների արհեստական սերմնավորումը։

7. Իմանալ մաքիներն ու խոյերը զուգավորելու նախապատրաստական աշխատանքի ձևը։

8. Իմանալ՝ քանի մայր մաքի կարող է ծածկել արտադրող խոյը մեկ օրում և զուգավորման սեզոնի ընթացքում։

9. Ինչ առավելություն ունի ձեռնաքաշ զուգավորումն ազատ զուգավորման համեմատությամբ։

10. Իմանալ վոչխարների հղիության տևողությունը։

11. Իմանալ վոչխարների զուգավորման և ծնելու օրացույցը։

12. Տնտեսական ինչպիսի ոգտակար հատկանիշների հիման վրա պիտի կատարել վոչխարի և խոյի ընտրությունը։

13. Ինչ հատկանիշների հիման վրա կատարել վոչխարների և խոյերի խոտանումը:

## II. Կերակրման գծով

1. Ինչպես պետք է կազմել մայր վոչխարների, խոյերի և մատղաշների կերի նորման մսուրային և արոտային շրջաններում:

2. Ինչպես պետք է կերակրել տոհմային մաքիներին, խոյերին և մատղաշներին՝ տարվա բոլոր շրջաններում:

3. Ինչպես և ինչպիսի նորմաներով պետք է կերակրել հղի վոչխարներին տարվա տարբեր շրջաններում:

4. Վոչխարներին բտելու հիմնական կանոնները՝ արոտի և լրացուցիչ կեր տալու միջոցով:

5. Ինչպես պետք է վերակազմել բտվող և կթվող վոչխարների հոտերը:

6. Վոչխարների և գառների արոտային պահպանման հիմնական կանոնները (բաց ճակատով, գիշերը, շոգին, անբարենպաստ յեղանակի դեպքում և այլն):

7. Ինչ միջոցառումներ պետք է անցկացնել արոտի նախապատրաստման ասպարեզում և արոտի դուրս բերելու նախօրյակին:

8. Ինչու՞ վոչխարներին հանքային նյութեր են տալիս. հանքային նյութերի նորման և կերակրման ձևը:

9. Ինչպես պետք է վոչխարներին մսուրային խնամքից փոխադրել արոտային խնամքի և ընդհակառակը:

10. Ինչ պայմաններում են կոլտնտեսությունում փչացած համարում հարդը, խոտը, սիլոսը, արմատապտուղները և այլ տեսակի կերը:

11. Ձմռան հոտի ամեն մի գլուխ վոչխարին տարեկան ինչ քանակի զանազան կեր է պահանջվում:

12. Ինչպես պետք է կերակրել արտադրողներին զուգավորման շրջանում և այդ շրջանից դուրս:

13. Տվյալ կոլտնտեսության արոտավայրում ինչպիսի թունավոր բույսեր և սերմեր են բուսնում:



## III. Մատղաշների խնամքի գծով

1. Ինչպես պետք է նախապատրաստվել ծնին:

2. Ինչպես վորոշել և հոտից առանձնացնել հղի մաքիներին:

3. Ծնի կամպանիան անցկացնելու համար պահանջվելիք ինվենտարը:

4. Ծնելուց հետո ինչու պետք է անմիջապես հեռացնել ընկերքը:

5. Ինչպես պետք է խնամել վորբ գառներին:

6. Որվա վո՞ր ժամից սկսած պետք է գառներին արոտ դուրս բերել, և յե՞րբ պետք է արոտից գոմ վերադարձնել:

7. Խտացրած կերի նորմաները և գառներին կերակրելու կանոնները:

8. Ծնող մայր վոչխարին պտղի անկանոն դիրքի ժամանակ առաջին օգնություն ցույց տալը:

9. Ինչպես և ինչ ժամանակ գառներին ծծից կտրել:

10. Վոչխարներին և գառներին նշան անելը:

## IV. Վոչխարների խնամքի յեվ պահպանման գծով

1. Ինչպիսի պայմաններում պիտի լինի վոչխարների գոմը՝ լույսի, ջերմության, չորության, օդի մաքրության տեսակետից. ինչքան տեղ պետք է հատկացնել մեկ գլուխ վոչխարին և մատղաշին:

2. Ինչու համար են կազմակերպվում բազաները, սրանց նշանակությունը և կազմակերպման վայրը:

3. Զուգավորման, ծնի, լողացնելու, խուզելու, կթելու կամպանիաների համար անհրաժեշտ ինվենտարը:

4. Վոչխարների խնամքի և պահպանման կանոնները՝ մսուրային և արոտային շրջանում:

5. Արտադրող խոյերին խնամելու և պահպանելու կանոնները զուգավորման և տարվա տարբեր շրջաններում:

6. Ինչպես պետք է վոչխարներին նախապատրաստել խուզելու: Խուզելու կանոնները, խուզված վոչխարների խնամքը:

7. Ինչպիսի մայր վոչխարներին պետք է կթել:

8. Գիրացվող (չաղացվող) վոչխարներին ինչպիսի արոտներ պետք է տրամադրել. գիրացումն անցկացնելու կանոնները

9. Հոտ պահպանող շների խնամքը և պահպանումը։ Իմանալ հոտն սպասարկելու համապատասխան ձևերը։

10. Ինչպիսի տեղ պետք է հատկացնել ոչխարների շենքեր կառուցելու, ջրելու վայրի և այլ կարիքների համար։

## V. Պլանավորման հաշվառման յեվ հաշվետվության գծով

1. Ֆերմայի վարիչ-բրիգադիրը պետք է իմանա ֆերմայի անասնապահության զարգացման պետական պլանը, ինչպես նաև՝ բրդի, մսի, մորթիների մթերման պլանային պարտավորությունները։

2. Ինչպես կազմել բրիգադիրի և կոլտնտեսության ֆերմայում աշխատող ամեն մի կոլտնտեսականին տրվող տարեկան և ամսական առաջադրանքը։

3. Ինչպես կազմել զուգավորման և ծնի պլանը։

4. Ինչպես պետք է տանել տավարի, մթերքների, կերի, զուգավորման, ծնի, ստացված սերնդի, գույքի և աշխատանքների հաշվառումը։

5. Ֆերմաների գծով ներկայացվելիք հաշվետվության ձևերը և ժամկետները։

## VI. Աշխատանքի կազմակերպման գծով

1. Ինչ ցուցանիշների հիման վրա յե կատարվում հովվի և ֆերմայի այլ աշխատավորների աշխատանքի վարձատրումը։

2. Ոչխարապահական բրիգադների կազմակերպման կարգը։ Ինչքան ոչխար պետք է սպասարկի բրիգադը և հովիվը (ծանրաբեռնվածության չափը)։

3. Ինչու համար ֆերմայի աշխատողներին լրացուցիչ աշխօրեր և բնամթերքով նվեր (պրեմիա) են տալիս։ Բնամթերքի նվիրատվության կարգը։

4. Ինչպիսի ցուցանիշների հիման վրա բրիգադի աշխօրերը 10—20% սահմաններում ավելացվում կամ պակասեցվում են։

## VII. Զոոհիգիենայի յեվ պրոֆիլակտիկ միջոցառումների գծով

1. Իմանալ ոչխարների գլխավոր հիվանդությունները



[ծաղիկ, սիբիրախտ, վարակիչ վիժում, ճիճվային հիվանդություններ, քոս, պրկախտ (столбняк) և այլն]։

2. Ինչ նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկել ծաղկի, սիբիրախտի, ճիճվային հիվանդությունների, գառների սպիտակ փորլուծի, ոչխարների քոսի և վարակիչ վիժման դեմ պայքարելու համար։

3. Ինչու՞ չի կարելի ոչխարներին ջրել ճահիճներից և կանգնած լճակների ջրից։

4. Ինչ պայմաններում կարելի յե պճեղները կտրել։

5. Իմանալ ոչխարներին լողացնելու ձևը։

6. Յե՞րբ պետք է կատարել խոյիկների ամորձատումը և կտրել մատղաշ գառների պոչը։

7. Վիժում առաջացնող պատճառները և դրա դեմ պայքարելու միջոցները։

8. Ինչպես պետք է հիվանդ ոչխարներին մեկուսարան հասցնել։

9. Ինչպես պետք է վարվել վարակիչ հիվանդություններից սատկած ոչխարների դիակների հետ։

10. Մեկուսարանը գոմի վո՞ր կողմում պետք է շինել, ինչպես է անպուռներին թաղելու վայրը։

11. Ինչ դեպքում է գործադրվում կարանտինը։

12. Ինչպես պետք է օգնել ոչխարներին՝ անկանոն դիրքով ծնելու դեպքում։

# ՀՈՎՎԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԶՈՈՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԸ

## I. Ոչխարների բուծման գծով

1. Մաքուր բուծում, տրամախաչում (մետիզացիա)։

2. Ինչպես որոշել ոչխարների սեռական հասունացման ժամանակը։

3. Ինչ հասակում են առաջին անգամ զուգավորում տվյալ շրջանի, տվյալ կոլտնտեսության մայրացու ոչխարներին. ինչ հասակից կարելի յե թույլ տալ առաջին անգամ զուգավորելու տվյալ շրջանի և տվյալ կոլտնտեսության մատղաշ խոյերին։

4. Ոչխարների հղիության տևողությունը։

5. Զուգավորման կամպանիային ինչպես պետք է նախապատրաստվել։

6. Ինչպես որոշել թե մայր ոչխարը յերբ է խոյի գալիս (ցանկության շրջանը)։

7. Իմանալ զուգավորման կամպանիային նախապատրաստվելու և կամպանիան անցկացնելու հիմնական կանոնները։

8. Ոչխարի կյանքի տևողությունը։

9. Ինչ նշաններով է իմացվում ոչխարի հասակը (տարիքը),

10. Ինչպես կազմակերպել բոլոր ձևի զուգավորումները։

11. Ինչ առավելություններ ունի ձեռնաքաշ զուգավորումը։

12. Ինչ նշաններով պետք է խոտանել մայր ոչխարներին և խոյերին։

13. Քանի մայր ոչխար պետք է ծածկել մեկ արտադրող խոյով մեկ օրում և զուգավորման սեզոնի ընթացքում։

## II. Կերակրման գծով

1. Իմանալ տարբեր կերերի արժանիքները (կոպիտ, հյութալի, խտացրած կեր, արմատապալարապտուղներ, սիլոս և այլն)։ Ինչպես զանազանել տվյալ շրջանի համար լավորակ կերը վատորակ կերից։

2. Գառան օրգանիզմի նորմալ զարգացման համար ինչ հանքային նյութեր են պահանջվում։ Հանքային կերի նորմաները, նախապատրաստման և կերակրման ձևերը։

3. Ստույգ կերպով որոշել ոչխարների կերի նորմաները և ռացիոնները, կարողանալ կանոնավոր կերցնել յեփած կերը՝ ոչխարանոցում, բազայում, մսուրային պահպանման պայմաններում և այլն։

4. Ինչպես պետք է կերակրել հղի մաքիներին։

5. Ոչխարների և գառների արոտային խնամքի և արածեցնելու տեխնիկայի հիմնական կանոնները (բաց ճակատով, գիշերը, շոգին, անբարենպաստ յեղանակներին)։

6. Ինչպես պետք է կերակրել խոյերին զուգավորման շրջանում և տարվա տարբեր յեղանակներին։

## III. Խնամքի յեվ պահպանման գծով

1. Ինչ պայմաններ պետք է ունենա ոչխարանոցը՝ լույսի, մաքրության և չորության տեսակետից։



2. Մեկ հասուն ոչխարի, գառան և ցեղական ոչխարի համար պահանջվող անհրաժեշտ տարածությունը։

3. Բազայի կազմությունը և դրա դերը։

4. Ոչխարների արոտային պահպանման պայմաններից մսուրայինին և վերջինից արոտային պայմաններին անցնելու կարգն ու կանոնները։

5. Ինչ ժամանակ պետք է աթարը կտրել և ոչխարանոցներն ախտահանել։

6. Ինչու չի կարելի գառներին արոտ դուրս բերել ցող յեղած դեպքում։

7. Ինչպիսի արոտներ պետք հատկացնել բտվող հոտերի համար։

8. Ո՞ր ջուրն է պիտանի ոչխարների համար։

9. Ինչն է պատճառը, որ ոչխարը կորցնում է իր բուրդը։

10. Զուգավորման, ծնի և խուզի կամպանիաների անցկացման համար անհրաժեշտ ինվենտարը։

11. Ո՞ր արոտներն են անպետք համարվում ոչխարների համար։

12. Ոչխարների խնամքը ձմեռվա շրջանում։

## IV. Մատղաշների աճեցման գծով

1. Ինչպես պետք է կազմակերպել ոչխարների ծինը։

2. Ինչպիսի ինվենտար է պահանջվում ծնի կամպանիան անցկացնելու համար։

3. Ինչպես պետք է կերակրել հղի մաքուն հղիության տարբեր շրջաններում։

4. Ինչպես պետք է դաստիարակել վորբ գառներին։

5. Ինչպես են ձևավորում սակմանները։

6. Ինչպես պետք է մատղաշներին լրացուցիչ խտացրած կեր տալ։

7. Ինչ հասակում պետք է գառներին ծծից կտրել։

## V. Աշխատանքի կազմակերպման գծով

1. Մեկ բրիգադը քանի ոչխար պետք է սպասարկի։

4092

2. Ինչ ցուցանիշների հիման վրա յեն աշխորեր տրվում բրիգադին և առանձին աշխատանքի դեպքում։

3. Ինչ պայմաններում և կատարվում լրացուցիչ աշխորերի բաշխումը և գառներ նվեր տալը։

4. Ինչի համար և ինչ չափով հովվի աշխորերից կարող են պահում կատարել։

## VI. Զոոհիգիենայի յեվ պրոֆիլակտիկայի գծով

1. Իմանալ վոչխարների գլխավոր հիվանդությունները [ծաղիկ, սիբիրախտ, վարակիչ վիժում, ճիճվային հիվանդություններ, քոս, պրկախտ (столбняк) և այլն]։

2. Ինչպիսի նախազգուշական միջոցներ պետք և ձեռնարկել ծաղկի, սիբիրախտի, գառների սպիտակ փորլուծի, քոսի, վարակիչ վիժման և այլ հիվանդությունների դեմ պայքարելու ժամանակ։ Ինչու չի կարելի վոչխարներին ջրել կանգնած լճակների և ճահիճների ջրով։

3. Ինչպիսի պայմաններում պետք և կտրել վոչխարների պճեղները։

4. Իմանալ վոչխարներին լողացնելու ձևերը։

5. Ինչ հասակում և կատարվում խոյիկների ամորձատումը և յերբ պետք և կտրել մատղաշ գառների պոչը։

6. Ինչ պատճառներից և առաջանում վիժումը. վերջինիս դեմ պայքարելու միջոցները։

7. Ինչպես պետք և հիվանդ վոչխարը փոխադրել մեկուսարան։

8. Ինչ պետք և անել վարակիչ հիվանդություններից սատկած վոչխարների կաշին։

9. Ինչ տարածության վրա և ինչ ուղղությամբ պետք և լինի մեկուսարանը և անասուններին թաղելու վայրը։

10. Ինչ դեպքում և գործադրվում կարանտինը։

11. Ինչպիսի օգնություն պետք և ցույց տալ անկանոն ծնի դեպքում։



Խմբագիր՝ Ս. Թադևոսյան
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Գլավլիտի լիազոր № 1183
Հրատ № 418, տիրաժ 1500, պատվեր № 328
Հանձնվել և արտադրության 1937 թ. ապրիլի 4-ին
Ստորագրված և տպագրելու 1937 թ. հունիսի 2-ին

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան
NL0289205

Գին 30 կոպ.

282

21.246

НАРКОМЗЕМ АРМЯНСК. ССР

Программа по зоотехминимуму
в жив. товарных фермах

Сельхозгиз 1937 Ереван